ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդաձոր համայնքում

Բժշկական թափոնների այրման կայանքի

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

(2-րդ լրամշակված)

Ձեռնարկող՝
Ա/Ձ Սերգե Ժիրայրի Հակոբյան

(ստորագրություն) Կ.Տ.

Երևան – 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 4

2. ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ 5

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ՝ ԱՅԴ ԹՎՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ 6

3.1. Ֆիզիկաաշխարհագրական պայմանները 6

3.2. Կլիմայական պայմանները 9

3.3. Ջրային ռեսուրսներ 12

3.4. Մթնոլորտային օդ 12

3.5. Հողային ռեսուրսներ 13

3.6. Բուսական աշխարհ 13

3.7. Կենդանական աշխարհ 14

3.8. Բնության հատուկ պահպանվող տարածքներ 14

3.9. Սոցիալ-տնտեսական պայմանները 16

3.10. Պատմամշակութային հուշարձաններ 17

4. ՆԱԽԱԳԾԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԶՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ 20

4.1. Զրոյական տարբերակ 20

4.2. Քննարկվող տարբերակներ 20

4.2.1. Այրում 20

4.2.2. Ջերմային վնասազերծում /ախտահանում/ 21

4.2.3. Ընտրության հիմնավորում 21

5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 21

5.1. Վնասազերծման ենթակա թափոնների բնութագրերը 21

5.2. Տարածքի նախապատրաստումը 22

5.3. Տեխնոլոգիական գործընթացների նկարագրությունը 25

5.4. Սանիտարա-պաշտպանիչ գոտի 29

6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ 29

6.1. Օդային ավազան 29

6.1.1. Թափոնների այրման արգասիքների հաշվարկ 29

6.1.2. Գազային վառելիքի այրման արտանետումների հաշվարկ 30

6.1.3. Գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկների արդյունքները 33

6.2. Ջրային ռեսուրսներ 33
6.3. Թափոններ 34
6.4. Կենսաբազմազանություն 35
6.5. Սոցիալական խնդիրներ 35
6.6. Կումուլյատիվ (հավաքական) ազդեցություն 36
7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ 36
8. Ազդեցությունների կանխարգելմանը, մեղմացմանն ու նվազեցմանն ուղղված միջոցառումները 38
8.1. Կլինիկական թափոնների հետ վարման և դրանց գործածության ընդունված կարգը 38
8.2. Բժշկական թափոնների հավաքմանը, ժամանակավոր պահմանը ներկայացվող պահանջներ 39
8.3. Մթնոլորտային օդ 40
8.4. Ջրային ռեսուրսներ 40
8.5. Հողային ռեսուրսներ 40
8.6. Կենսաբազմազանություն 40
8.7. Սոցիալական ազդեցության մեղմման միջոցառումներ 41
9. Շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունների և միջոցառումների ծրագիրը արտակարգ և վթարային իրավիճակների դեպքում: 41
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 43
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ 44
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 47
Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք 48
Հավելված 2. 2-րդ և 3-րդ հանրային քննարկումների հայտարարություններ, մասնակիցների գրանցաթերթեր և արձանագրություններ 55
Հավելված 3. Պետական տուրքի վճարման անդորրագիր 64
Հավելված 4. Հողամասի սեփականության իրավունքի վկայական 65
Հավելված 5. Պետական ռեգիստրի գրանցման վկայական (Պետական միասնական գրանցամատյանից քաղվածք) 67
Հավելված 6. Գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկի արդյունքները 69

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Կլինիկական թափոնները կենսաբանական, ֆիզիկական, քիմիական վտանգ են ներկայացնում մարդկանց առողջության և շրջակա միջավայրի համար: Բացի այդ, վնասազերծման ոչ լիարժեք մեթոդները նույնպես կարող են խնդիրներ առաջացնել հանրային առողջության համար և աղտոտել շրջակա միջավայրը: Թափոններ առաջացնող և թափոնների հետ գործ ունեցող կազմակերպությունները պատասխանատու են իրենց թափոնների համար՝ գոյացման պահից մինչև դրա վերջնական հեռացումը:

Կլինիկական թափոնների վնասազերծման նպատակներն են.

1) հիվանդներին և առողջապահական համակարգի աշխատողներին պաշտպանել բժշկական թափոնների հետ կապված վտանգներից,

2) հասարակությունը պաշտպանել բժշկական թափոնների հետ կապված վտանգներից,

3) պահպանել շրջակա միջավայրը:

Սույն նախաձեռնության նպատակն է հավաքել տարածաշրջանի բժշկական հաստատություններում առաջացող կլինիկական թափոնները և այրման եղանակով ոչնչացնել դրանք:

Նախաձեռնության ձեռնարկող է հանդիսանում անհատ ձեռներեց Սերգե Ժիրայրի Հակոբյանը, գործունեության իրականացման հետևյալ հասցեով՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Ձորագյուղ, 1412, 8-րդ փ., 38 տ:

Պետական հաշվառման համարը՝ 76. 1135536, ամսաթիվը՝ 07. 06. 2020 թվական:

Նախատեսվող գործունեության հասցեն՝ ՀՀ գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդաձոր գյուղի վարչական տարածք:

Սույն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /այսուհետ՝ ՇՄԱԳ/ հաշվետվությունը կազմված է “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի և ՀՀ շրջակա միջավայրի նախարարության “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական կենտրոն” ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված տեխնիկական առաջադրանքի պահանջների հիման վրա:

Աշխատանքներում ներկայացված են տեղանքի բնակլիմայական և սոցիալական ելակետային պայմանները:

Հաշվետվությունում նկարագրված են գործունեության տեխնոլոգիական բնութագրերը, օգտագործվող հումքը և տեխնիկական միջոցները:

Դիտարկվել են այլընտրանքային տարբերակները, ներառյալ՝ զրոյական տարբերակը:

Գնահատվել են նախատեսվող գործունեության բնապահպանական և սոցիալական ռիսկերը, որոնց վերլուծության արդյունքում մշակվել են բացասական ազդեցությունը կանխող կամ նվազեցնող միջոցառումներ:

Աշխատանքների պատշաճ կազմակերպման նպատակով մշակվել է բնապահպանական կառավարման պլան: Մշակված միջոցառումների արդյունավետությունը վերահսկելու համար ներկայացվել է մշտադիտարկումների (մոնիթորինգի) ծրագիր:

2. ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթաօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),
2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),
3. <<Թափոնների մասին>> ՀՀ օրենք (24.11.2004 թ.),
4. <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ օրենք (07.02.2012թ.),
5. <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> ՀՀ օրենք (01.11.1994թ.),
6. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենք (21.06.2014թ),ю
7. <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> ՀՀ օրենք (*27.11.2006թ .)*
8. <<Բուսական աշխարհի մասին>> ՀՀ օրենք (*23.11.1999)*
9. <<Կենդանական աշխարհի մասին>> ՀՀ օրենք (*03.04.2000)*
10. <<Սևանի մասին>> ՀՀ օրենք (*15.05.2001)*
11. <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենք (11.04.2005թ),
12. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”
13. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման “Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին”
14. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”
15. <<Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 30.06.2003թ-ի N 121-Ն որոշում:
16. ՀՀ առողջապահության նախարարի 4 մարտի 2008 թ. N 03-Ն հրաման «ԲԺՇԿԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻԳԻԵՆԻԿ ԵՎ ՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ» N 2.1.3-3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒՄԱՍԻՆ»

Համաձայն <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով սահմանված դասակարգումների, նախատեսվող գործունեությունը դասվում է <<Ա>> կատեգորիայի և ենթակա է փորձաքննության՝ երկու փուլով:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ՝ ԱՅԴ ԹՎՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

3.1. Ֆիզիկաաշխարհագրական պայմանները

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդաձոր համայնքի տարածքում, որը նախկինում սեփականության իրավունքով պատկանել է համայնքի բնակիչ Անահիտ Դավթյանին (0.138 հա հողատարածք, 05-084-0205-0003 ծածկագրով): Սեփականատիրոջ հետ ձեռք բերված նախնական համաձայնությամբ ձեռնարկվել է նախատեսվող գործունեությունը, որին զուգահեռ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով Ձեռնարկողի կողմից ձեռք է բերվել նշված հողատարածքը, որի վրա կիրականացվի բժշկական թափոնների այրման կայանքի հիմնման գործընթացը: Հողամասի սեփականության վկայականը, Ձեռնարկողի պետական գրանցամատյանից քաղվածքը, ինչպես նաև հողատարածքին վերաբերող նախկին փաստաթղթեր և համայնքի կողմից տրամադրված փաստաթղթերը ներկայացված են սույն ՆԳՀ-ում՝ որպես Հավելված 1: Հողատարածքը նախկինում եղել է գյուղատնտեսական նշանակության, իսկ հետագայում Վարդաձոր համայնքի 2021 թվականի մարտի 19-ի թիվ 09-Ա որոշմամբ հողամասի նպատակային նշանակությունը փոխվել է՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների, գործառնական նշանակությունը՝ այլ արդյունաբերական օբյեկտների հողեր:

Վարդաձոր բնակավայրը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի հարավ-արևմտյան մասում, Երանոս և Զորագյուղ բնակավայրերի հարևանությամբ: Գործունեության հողակտորը գտնվում է Վարդաձոր գյուղից դեպի Սևան-Գավառ-Մարտունի մայրուղու միջնամասում, գյուղի մոտակա բնակելի թաղամասի վերջին տնից 530 մ հեռավորության վրա, Սևան ազգային պարկի սահմանից /ավտոճանապարհ/ ուղիղ գծով 600 մ, իսկ Սևանալճից՝ 2.2 կմ հեռավորության վրա:

Տարածքը ամայի է, այստեղ չկան ծառեր, շինություններ:

Տարածաշրջանի ձևավորման հիմնական գործոնը Վարդենիսի լեռնաշղթան է: *Վարդենիսի լեռնաշղթան* սահմանազատում է Հայաստանի Գեղարքունիքի, Վայոց ձորի մարզերը և Արցախի հանրապետությունը: Զգվում է Գեղամա լեռների Գնդասար գագաթից մինչև Մեծ Ծարասարի լեռնահանգույցը: Երկարությունը 60 կմ է, առավելագույն բարձրությունը Վարդենիս լեռն է /3552 մ/: Լեռնագագաթներից են *Սանդուխտասարը* /3454 մ/ և *Փորակ* լեռը /3047 մ/, որը երիտասարդ հրաբուխ է:

Ըստ ՀՀ ազգային ատլասի երկրաշարժերի հնարավոր ուժգնությունը կազմում է 8 բալ, գետնի առավելագույն հորիզոնական արագացումները՝ 0.1-0.2 մ/վրկ2:

Ստորև բերված է տարածքի իրադրության սխեման.

Նկար 1. Իրադրության սխեմա



Նկար 2. Հողատարածքի սխեման

3. 2. Կլիմայական պայմանները

Օդի միջին տարեկան ջերմաստիճանը 4.6–ից 5.4°C, բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝ -33, -32°C, բացարձակ առավելագույն ջերմաստիճանը՝ 34°C: Օդի հարաբերական խոնավության միջին տարեկանը 70-ից 68% է, տեղումների քանակը տարեկան՝ 489-ից 492 մմ, ձնածածկույթի առավելագույն տասնօրյակային բարձրությունը՝ 37-ից 75 սմ, տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը՝ 96-ից 103 օր, քամու միջին տարեկան արագությունը՝ 1.8-ից 2.6 մ/վ, հողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 108.0 սմ:

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ)՝ 489-ից - 492 մմ

Օդի միջին ջերմաստիճանը հունվարին՝ 5^0C

Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին՝ + 16^0C:

Կլիմայական բնութագրերը ըստ <<Շինարարական կլիմայաբանություն ՀՀՇՆ II-7.01-2011>> նորմատիվային փաստաթղթում առկա <<Մարտունի>> օդերևութաբանական կայանի կլիմայական տվյալների՝ (օդի ջերմաստիճան, հարաբերական խոնավություն, մթնոլորտային տեղումներ, քամի).

Օդի ջերմաստիճան

Բնակավայրի բաց. բարձր.	Միջին ամսական, ըստ ամիսների												միջին տարեկան	բացարձակ նվազա-գույն	բացարձակ առավելագույն
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Մարտունի 1943	-5,7	-5,8	-1,7	4,8	9,0	12,9	16,0	15,8	12,8	7,5	2,4	-2,9	5,4	-32	34

Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրը	Օդի հարաբերական խոնավությունը (%) ըստ ամիսների												միջին տարեկան	միջին ամսական ժ. 13-ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		ամենացուրտ ամսվա	ամենատաք ամսվա
Մարտունի	68	71	69	66	68	70	72	72	65	65	66	68	68	64	51

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակա-վայրը	Տեղումների քանակը միջին ամսական/օրական առավելագույնը, մմ												տարե-կան	Տասնօրյա առավելագույնը	ձյան ծածկույթը	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			օրերի թիվը	Ջրի առավել լագույնքա-նակըձյանմեջ (մմ)
Մարտունի	23	28	41	54	71	69	42	29	33	39	39	24	492	75	103	151
	51	34	40	46	41	69	65	37	59	49	84	41	84			

Քամի

Բնա կավայրը	Մթնո լորտա յին ճնշու մը ԳՊԱ	Տարվա ամիսը	Քամու ուղղությունների կրկնելիությունը % Քամու միջին արագությունը մ/վրկ (Ճամբարակ կայանի համար տվյալները բացակայում են)								Անհող մություն ների կրկնելի ությունը %	Քամու միջին ամսա կան արա գու-թյունը մ/վրկ	Քամու միջին տարե կան արա գու-թյունը մ/վրկ	Ուժեղ քամի ներով (>15 մ/վրկ) օրերի քանա կը	Քամու հաշվար-կային արագու-թյունը (մ/վրկ), որը հնարավոր է մեկ անգամ տարիների ընթացքում		
			ըստ ուղղությունների												20	50	100
			հս.	հս. արևել յան	արևել յան	հվ. արևել յան	հվ.	հվ. արև մըտ յան	արև-մըտ-յան	հս. արև-մըտ յան							
Մարտունի	805,1	I	5	1	1	2	49	37	3	2	85	3,7	2,6	43	25	27	28
			1,7	1,7	1,6	2,2	3,6	4,0	2,4	2,2							
		IV	11	5	3	2	40	30	5	4	78	2,9					
			1,9	2,0	1,7	2,2	3,4	3,8	2,4	2,0							
		VII	30	12	4	1	20	17	5	11	71	1,6					
			2,0	2,1	1,8	1,5	1,7	1,9	1,8	2,0							
		X	9	5	2	2	40	35	4	3	83	2,5					
			1,8	1,7	1,6	1,7	2,6	3,1	2,3	1,9							

Արեգակնային ճառագայթում

Բնակավայրի, օդերևութաբա-նական կայանի անվանումը	Գումարային (ուղիղ և ցրված) ճառագայթումը հորիզոնական մակերևույթին անամպ երկնքի դեպքում, ՄՋ/մ2												
	Ըստ ամիսների												Տարեկան գումարային
	Հուն	Փետր	Մարտ	Ապր	Մայ	Հուն	Հուլ	Օգս	Սեպ	Հոկ	Նոյ	Դեկ	
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**	**11**	**12**	**13**	**14**
Մարտունի	374	454	713	832	1030	968	1008	925	702	583	385	342	8316

3. 3. Ջրային ռեսուրսներ

Տարածաշրջանի հիմնական ջրային ռեսուրսը Սևանա լիճն է:

Սևանա լիճը գտնվում է ծովի մակարդակից մոտ 1900 մետր բարձրության վրա: Այն աշխարհի քաղցրահամ ջուր ունեցող 2-րդ բարձրադիր լիճն է: Հնում հայտնի է եղել Գեղամա ծով, Գեղարքունյաց ծով անուններով:

Երկարությունը 70 կմ է, առավելագույն լայնությունը՝ 55 կմ: Հայելու մակերեսը կազմում է 1260 կմ^2, որով ամենախոշորն է Հարավային Կովկասի տարածքում: Միջին խորությունը 26.8 մ է, ամենախորը վայրը՝ 83 մ (Փոքր Սևան): Ջրի ծավալը 32,92 մլրդ մ^3 է: Սևանա լիճը Շորժայի ստորջրյա թմբով բաժանվում է 2 մասի՝ Մեծ Սևանի (37.7 մ միջին խորություն) և Փոքր Սևանի (50.9մ):

Սևանա լիճը բաց լիճ է և ունի քաղցրահամ ջուր: Լիճ են թափվում 28 մեծ ու փոքր գետակներ, սակայն սկիզբ է առնում միայն մեկը՝ Հրազդանը: Վերջինիս շնորհիվ ջրերի տարեկան արտահոսքը կազմում է 0.05ից մինչև 1.5 կմ^3: "Սևանա լճի մասին" օրենքը ընդունելուց հետո (2001 թ.) լճից տարեկան արտահոսքը չի գերազանցել 0.34 կմ^3:

Լճի ծագումնաբանական վարկածներից մեկի համաձայն՝ այն առաջացել է չորրորդական ժամանակաշրջանում: Այն գոյացել է հրաբխային գործունեության հետևանքով՝ միջլեռնային տեկտոնական իջվածքում սառցադաշտային և ձնհալոցքային ջրեր լցվելու արդյունքում: Չորս կողմում առանձնակի շրջապատում են Արեգունու, Սևանի, Վարդենիսի և Գեղամա լեռները:

ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորգը իրականացնում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը:

2021 թվականին Սևանա լճի ջրի որակի ուսումնասիրության նպատակով ջրի նմուշառումն իրականացվել է 16 դիտակետում: Ջրի նմուշները վերցվել են ափամերձ և կենտրոնական գոտիներից, ուղղաձիգ մակերևութային (մինչև 0.5 մ խորության), միջին և հատակամերձ շերտերից: Գերմանիայի Շրջակա միջավայրի Հելմհոլցի կենտրոնի, ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի, ՀՀ ԳԱԱ

Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի հետ համատեղ իրականացվող SEVAMOD2 հայ-գերմանական ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր ամիս իրականացվել է ջրի որակի մոնիթորինգ լճի 2 դիտակետում ուղաձիգ տարբեր խորություններում՝ մակերևույթից մինչև հատակամերձ ջրաշերտեր, հետազոտվել է ջրի 14-ական փորձանմուշ:

Մեծ Սևանի ջրի որակը 2021 թվականին հիմնականում գնահատվել է 4-րդ («անբավարար» որակ) կամ 5-րդ դաս («վատ» որակ), իսկ Փոքր Սևանինը՝ 3-րդից 5-րդ դաս («միջակ»-«վատ» որակ), երկու դեպքում էլ պայմանավորված հիմնականում կենսածին նյութերով:

3. 4. Մթնոլորտային օդ

ՀՀ տարածքում մթնոլորտային օդի որակը /աղտոտվածությունը/ վերահսկում է "Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն" ՊՈԱԿ-ը, որը Վարդաձոր համայնքում և մերձակա բնակավայրերում չունի մշտադիտարկման կետեր: Գյուղում

մթնոլորտային օդի որակը գնահատելու համար որոշակի վերապահումով կարելի է կիրառել ՊՈԱԿ-ի համապատասխան ձեռնարկ-ուղեցույցը[1]: Ըստ այդ ուղեցույցի մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են՝

Փոշի՝ 0.2 մգ/մ^3;
Ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ^3;
Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ^3;
Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ^3:

3. 5. Հողային ռեսուրսներ

Տարածաշրջանին առավել բնորոշ են լեռնամարգագետնային հողերը: Այստեղ ցածր ջերմաստիճանը և ուժեղ խոնավացումը նպաստել են գաճաճ, ուժեղ ճիմ առաջացնող հացազգի տարախոտային և ընդավոր բուսական խմբավորումների զարգացմանը: Լեռնամարգագետնային հողերի մեծ մասի բուսածածկը հիմնականում օգտագործվում է անասնապահության համար՝ որպես արոտավայրեր: Լեռնամարգագետնային հողերի հումուսի պարունակությունը 13-20% է, ունեն թեթև մեխանիկական կազմ ու փխրուն կառուցվածք, միջինից ցածր կատիոնային փոխանակության ունակություն (15-20 մգ/էկվ) և թթվային ռեակցիա (pH=4,8-5,5), բարենպաստ ջրաֆիզիկական հատկություններ:

Անմիջապես նախատեսվող տարածքը նույնպես դասվում է լեռնամարգագետնային հողերի շարքին:

Քանի որ տարածքը նախկինում օգտագործվել է միայն որպես արոտավայր, այստեղ որևէ արտադրական գործունեություն, պարարտանյութերի օգտագործում չի եղել, ուստի հողածածկը չի կարող աղտոտված լինել մարդածին աղտոտիչներով:

3. 6. Բուսական աշխարհ

Տարածաշրջանի բուսական աշխարհի ձևավորմանը մեշապես նպաստել է Սևանա լիճը: Տարածքը պատկանում է Սևանի ֆլորիստիկ շրջանին: <<Սևան>> ազգային պարկի և դրա պահպանական գոտու ֆլորան ընդգրկում է անոթավոր բույսերի 1727 տեսակ: Ընդ որում, <<Սևան>> ազգային պարկի տարածքում աճում է անոթավոր բույսերի 1145 տեսակ, իսկ պահպանական գոտում՝ 1587: Պարկի ֆլորան ներկայացված է 28 ծառատեսակներով, 42 թփերի տեսակներով, 866 բազմամյա խոտաբույսերով և 209 միա մյա ու երկամյա բուսատեսակներով: Պահպանական գոտու ֆլորան ներկայացված է 32 ծառատեսակներով, 102 թփերի տեսակներով, 1146 բազմամյա բուսականությամբ:

Ներկայացվող տեղանքում բուսատեսակների մեջ գերակշռում են լեռնատափաստանային, ենթալպյան և ալպյան բուսատեսակները, որոնք էլ հանդիսանում են ամառային արոտավայրեր ու խոտհարքներ: Գեղարքունիքի

1 EIMC N 15-1/14 ՀՀ շրջակա միջավայրի էկոլոգիական մոնիթորինգի արդյունքների մասին. Տեղեկանք, օդային ավազան, էջ 22

[2] ՀՀ բնապահպանության /շրջակա միջավայրի/ նախարարության "Հիդրոօդերևութաբանության և մոնիթերինգի կենտրոն" ՊՈԱԿ. "ՀՀ բակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները" ուղեցույց-ձեռնարկ: Երևան-2011

մարզում շատ քիչ է անտառային բուսականությունը, կաղնու, գիհու և որոշ այլ ծառատեսակների նոսր, թփուտային պուրակներ կան հյուսիս-արևելյան լեռնալանջերին, իսկ լճի մակարդակի իջեցման հետևանքով առաջացած տարածքներում աճեցվել են արհեստական անտառաշերտեր:

Նախնական գնահատման փուլի, ինչպես նաև լրացուցիչ իրականացված դաշտային հետազոտությունների փուլում պարզվեց, որ նախատեսվող գործունեության տարածքըև հարակից տարածքները գյուղատնտեսական գործունեության մեջ ակտիվ ներգրավված տարածքներ են և արոտավայրեր, որոնցում այդ գործունեությունքով բնականոն վեգետացիոն շրջանները խախտված են, ամեն տարի գերարածեցվում են, որի հետևանքով տարածքի բուսական աշխարհը խիստ աղքատիկ է: Այստեղ չկա բնական բուսածածկ և համապատասխանաբար ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ:

3.7. Կենդանական աշխարհ

Տարածքում հանդիպում են երկկենցաղների՝ 3, սողունների՝ 16, թռչունների՝ 84, կաթնասունների 28 տեսակներ: Գիշատիչ կենդանիներից տարածված են գայլը, աղվեսը, գորշուկը, կզաքիսը, աքիսը, սմբակավորների գրանցման դեպքեր գրականության մեջ հայտնի չեն, կրծողներից՝ ճագարամուկը, գետնասկյուռը և այլն, թռչուններից՝ անգղը, արծիվը, կռունկը, կաքավը, լորը, արտույտը, սարյակը, կկուն, ճնճղուկը, սողուններից՝ հայկական լեռնատափաստանային վահանագլուխ իժը:

Նախնական գնահատման փուլի, ինչպես նաև լրացուցիչ իրականացված դաշտային հետազոտությունների փուլում պարզվեց, որ նախատեսվող գործունեության տարածքըև հարակից տարածքները գյուղատնտեսական գործունեության մեջ ակտիվ ներգրավված տարածքներ են և արոտավայրեր, հետևաբար տարածքում չկան կենսագործունեության ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակների համար, ինչի հետևանքով ուսումնասիրությունների ընթացքում տարածքում այդ տեսակները կամ նրանց կենսագործունեության հետքեր, արգասիքներ չեն հայտնաբերվել:

3.8. Բնության հատուկ պահպանվող տարածքներ

“Սևան ազգային պարկ”

Հայցվող տարածքից ուղիղ գծով 600 մ հեռավորության վրա անցնում է Սևան ազգային պարկի սահմանը: Ազգային պարկը զբաղեցնում է Սևանա լճի ամբողջ հայելին և ափամերձ տարածքները: Պարկի ընդհանուր տարածքը՝ Սևանա լճի հայելու հետ միասին, կազմում է 150,1 հազ. հա, այդ թվում 125,3 հազ. հա ջրային մակերես և 24,8 հազ. հա՝ ցամաք:

Պարկը գտնվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության իրավասության ներքո: Ստեղծվել է 1978 թ մարտի 14-ին, ՀԿԿ Կենտկոմի և Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի թիվ 125 որոշմամբ:

Պարկի տարածքի բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, պաշտպանության, վերականգնման, վերարտադրության, հաշվառման, գույքագրման, դիտանցի, ինչպես նաև պարկի բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումը իրականացնում է «Սևան ազգային պարկ» պետական ոչ

առևտրային կազմակերպությունը: Այն շահույթ չհետապնդող, իրավաբական անձի կարգավիճակ ունեցող բնապահպանական, գիտահետազոտական, գիտաճանաչողական կազմակերպություն է, որը գործում է ՀՀ Սահմանադրության, «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքների, ՊՈԱԿ-ի կանոնադրության և այլ իրավական ակտերի հիման վրա: «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքով (15-ը մայիսի 2001 թ.) ազգային պարկի տարածքը ամբողջությամբ մտել է Սևանի էկոհամակարգի Կենտրոնական գոտու մեջ, սահմանվելով որպես քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտ:

Գերխոնավ տարածքներ

Գերխոնավ տարածքների կարգավիճակը, խոցելիության աստիճանը և պահպանման կարգը կանոնակարգվում են “Միջազգային նշանակության խոնավ տարածքների, հատկապես՝ ջրլող թռչունների բնադրավայրերի մասին” կոնվենցիայով (Ռամսար, 1971): Կոնվենցիայի պաշտոնական կայքի Հայաստանի էջում ներկայացված են երեք տարածք.

1. Սևան ազգային պարկը իր պահպանման գոտիով
2. Արփի լիճը
3. Խոր Վիրապի ճահճային տարածքները

<u>Գեղարքունիքի մարզի բնության հուշարձանները՝ ըստ ՀՀ կառավարության 14.08.2008թ-ի N 967-Ն որոշմամբ հաստատված ցանկի</u>

Երկրաբանական հուշարձաններ

«Սևկատար» հրաբուխ	Գավառ քաղաքից 20 կմ արլ
«Աժդահակ» հրաբուխ	Գավառ քաղաքից 25 կմ հվ-արմ
«Անանուն» ծալքավորում	Սևանա լճի հս-արլ ափին, երկաթուղու պաստառի հատվածում, Սևան քաղաքի մոտ 45 կմ հեռավորության վրա
«Քարե ծով» քարացրոններ (չինգիլներ)	Լճաշեն գյուղից 1 կմ դեպի խարամային քարհանք
«Անանուն» հրաբխային արտահայտված շերտավորություն	Լճաշեն գյուղից 1 կմ հվ, հրաբխային խարամների գործող քարհանքի մոտ
«Արմաղան» հրաբուխ	Մադինա գյուղից 3.5 կմ արմ
«Հայրավանք» բրածո ֆաունա	Հայրավանք գյուղից 2-3 կմ հս-արլ

Ջրաերկրաբանական հուշարձաններ

«Սարանց» աղբյուր	Գավառ քաղաքի Հացառատ թաղամասում, ծ.մ-ից 1937 մ բարձրության վրա
«Խաչերի» աղբյուր	Գավառ քաղաքի արմ ծայրամասում
«Արցունք քար»	Ակունք գյուղի տարածքում, ծ.մ-ից 1980 մ բարձրության վրա

«Անանուն» աղբյուր	Լճավան գյուղի տարածքում, ծ.մ-ից 2045 մ բարձրության վրա
«Անանուն» աղբյուր	Կարճաղբյուր գյուղի հվ-արլ եզրին, ծ.մ-ից 1930 մ բարձրության վրա
«Վանքի աղբյուր» աղբյուրների խումբ	Սարուխան գյուղի հվ ծայրամասում, ծ.մ-ից 1977 մ բարձրության վրա

Ջրագրական հուշարձաններ

«Ակնա» լիճ	Ծաղկաշեն գյուղից 10 կմ արմ, Ակնասար լեռան լանջին

Կենսաբանական հուշարձաններ

«Ենթալպյան մարգագետին»	Դրախտիկ գյուղի մոտ

Ներկայացված աղուսյակային ցանկերից երևում է, որ նախատեսվող գործունեության տարածքում, ինչպես նաև հարակից՝ Վարդաձոր, Ջորագրյուղ, Երանոս բնակավայրերում ՀՀ բնության հուշարձանների ցանկում ներառված բնության հուշարձաններ տեղակայված չեն:

3.9. Սոցիալ-տնտեսական պայմանները

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդաձոր գյուղը գտնվում է Սևանա լճի հարավ-արևմտյան հատվածում, սահմանակից է Երանոս և Ջորագյուղ համայնքներին:

Մարտունի համայնքի հիմնական ցուցանիշները բերված են ստորև[2].

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԹԻՎԸ	17
ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ (ՄԱՐԴ)	89207
ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՑ (ԿՄ)	130
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ (հա)	1180489,5
ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆԸ ԾՈՎԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻՑ (Մ)	1920-2175
ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄ	հայեր
ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ԿՈԴ	(374)262
ՀԱՄԱՅԱՆՑԱՅԻՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ ՀԱՍՑԵՆ	www.martuni.am

Վարդաձոր գյուղը ծովի մակերևույթից գտնվում է 1950.0 – 2070.0 մ բարձրությունների վրա: Կոորդինատներ՝ 40°11′30″ հս. լ. 45°11′15″ ավ. ե:

Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված է «Սևան» ազգային պարկի 202.77 հա հատվածը:

- Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)՝ 2015
- Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա)՝ 33.3/333

[2] ՀՀ Գեղարքունիքի մարզի պաշտոնական կայքէջ

- Մշտական բնակչության թվաքանակը ըստ 1.01.2022թ.՝ 2825[3]

3.10. Պատմամշակութային հուշարձաններ

ՀՀ Գեղարքունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցուցակը հաստատված է ՀՀ կառավարության 2003թ-ի հունվարի 9-ի N 80-Ն որոշմամբ: Հիշյալ որոշման 4.84 բաժնում առանձին ներկայացված է Վարդաձոր գյուղի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցուցակը, որը ներկայացված է ստորև.

4.84. Վարդաձոր գյուղ

1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.
1.				ԱՄՐՈՑ ԾՈՎԱԲԵՐԴ («ԲԵՐԴԻ ԴՈՇ»)	մթա 2-1 հզմ	3 կմ ամ	Հ	
	1.1.			դամբարանադաշտ	մթա 2-1 հզմ		Հ	ամրոցից հվ
2.				ԱՄՐՈՑ «ՔՈԱՅԻ» (ՏՈՒԼԻԽՈՒ ՔԱՂԱՔ)	մթա 2-1 հզմ, մթա 8-6-րդ դդ., մթա 5-1-րդ դդ.	1 կմ աե	Հ	
3.				ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ԳՈՄԵՐԻ ԺԱՄ» («ԲԱՆԴԻ ՁՈՐ», «ՇՄԱԿԱԺԱՄ»)	9-17-րդ դդ.	4 կմ հս-ամ	S	գետի աջ ափին, բարձրադիր բլրին
	3.1.			մատուռ «Գոմերի ժամ»	15-16-րդ դդ.		S	վրկնգ.՝ 1998 թ.
		3.1.1		խաչքար	9-10-րդ դդ.		Հ	ներսում
		3.1.2		խաչքար	10-րդ դ.		Հ	ներսում
		3.1.3		խաչքար՝ Միրզի	16-րդ դ.		Հ	ներսում
	3.2.			գերեզմանոց	9-17-րդ դդ.		S	մատուռից աե, ոչ բարձր բլրին
		3.2.1		խաչքար	9-10-րդ դդ.		Հ	խրված հողի մեջ, ստորին մասը՝ կոտրված
		3.2.2		խաչքար	9-10-րդ դդ.		Հ	խրված հողի մեջ
		3.2.3		խաչքար	10-11-րդ դդ.		Հ	խրված հողի մեջ
4.				ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	մթա 2-1 հզմ	4-5 կմ ամ	Հ	«Գոմերի ժամ» տանող ճանապարհի 2 կողմերում, պահպանվել է 3 կղզյակներով
5.				ԵԿԵՂԵՑԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ	19-րդ դ.	կնտ	S	վրկնգ.՝ 2000 թ.
	5.1.			խաչքար	9-10-րդ դդ.		Հ	ստորին մասը չի պահպանվել
	5.2.			խաչքար	972 թ.		Հ	երկատված
	5.3.			խաչքար	10-11-րդ դդ.		Հ	հվ պատին, արտաքուստ
	5.4.			խաչքար	11-12-րդ դդ.		Հ	հս պատին, մկրտարանի խորշում
	5.5.			խաչքար	11-12-րդ դդ.		Հ	հվ ավանդատանը, ներքուստ
	5.6.			խաչքար	1518 թ.		Հ	հս պատին, մկրտարանի խորշի մեջ
	5.7.			խաչքար	1518 թ.		Հ	հս պատին, մկրտարանի խորշի մոտ

[3] ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքէջ

	5.8.			խաչքար	1539 թ.		Հ	խորանի հս պատին, ներքուստ
	5.9.			խաչքար	1539 թ.		Հ	խորանի հվ պատին, ներքուստ
	5.10.			խաչքար	1544 թ.		Հ	հվ պատին, արտաքուստ
	5.11.			խաչքար	16-րդ դ.		Հ	ամ կողմի բացօթյա սրահի հվ պատի շարվածքում, արտաքուստ
	5.12.			գերեզմանոց	9-20-րդ դդ.		S	եկեղեցու շուրջը
		5.12.1.		խաչքար	9-10-րդ դդ.		Հ	ընկած գետնին, ստորին մասը կոտրված
		5.12.2.		խաչքար	9-10-րդ դդ.		Հ	եկեղեցուց հս-աե, ընկած գետնին, բեկոր
		5.12.3.		խաչքար	9-10-րդ դդ.		Հ	աե կողմում, ընկած գետնին
		5.12.4.		խաչքար	9-10-րդ դդ.		Հ	ընկած գետնին, երկատված, ստորին մասը չի պահպանվել
		5.12.5.		խաչքար	9-10-րդ դդ.		Հ	եկեղեցուց 10 մ հվ-աե, ընկած գետնին, վերին աջ անկյունը՝ կոտրված
		5.12.6.		խաչքար	9-10-րդ դդ.		Հ	աե կողմում, դրված է որպես տապանաքար
		5.12.7.		խաչքար	9-10-րդ դդ.		Հ	կանգնեցված գետնին, եզրերը՝ ջարդոտված
		5.12.8.		խաչքար	10-րդ դ.		Հ	եկեղեցուց աե, կանգնեցված գետնին
		5.12.9.		խաչքար	10-րդ դ.		Հ	հենած տապանաքարին, եռատված
		5.12.10.		խաչքար	1548 թ.		Հ	եկեղեցուց հս-աե, կանգնեցված գետնին, թվակիր
		5.12.11.		տապանաքար՝ Ռստակեսի, Սարգսի	1546 թ.		S	եկեղեցուց աե
		5.12.12.		տապանաքար՝ Զոհրապի	1576 թ.		S	եկեղեցուց հս
		5.12.13.		տապանաքար՝ Մելքումի	16-17-րդ դդ.		S	եկեղեցուց 6 մ հս-աե
		5.12.14.		տապանաքար	16-17-րդ դդ.		S	եկեղեցուց 4 մ հս-աե, արձանագիր
		5.12.15.		տապանաքար Բարխուտարի	1602 թ.		S	
		5.12.16.		տապանաքար	1651 թ.		S	եկեղեցուց 10 մ հս-աե, արձանագիր
		5.12.15.		տապանաքար՝ Գրիգորի	1684 թ.		S	հս-աե եզրին
		5.12.18.		տապանաքար՝ Խաթունի	1684 թ.		S	եկեղեցուց 20 մ հս-աե
		5.12.19.		տապանաքար	1685 թ.		S	եկեղեցուց 15 մ աե, արձանագիր
		5.12.20.		տապանաքար՝ Մանեանի	1687 թ.		S	
		5.12.21.		տապանաքար	1699 թ.		S	եկեղեցուց 15 մ հս-ամ, կիսով հողածածկ
		5.12.22.		տապանաքար՝ Աղասու	1704 թ.		S	հվ-աե եզրին
		5.12.23.		տապանաքար	1704 թ.		S	եկեղեցուց 25 մ հս-աե
		5.12.24.		տապանաքար՝ Մարեանի	1706 թ.		S	եկեղեցուց 15 մ աե
		5.12.25.		տապանաքար՝ Յուլխանի	1711 թ.		S	եկեղեցուց 10 մ աե
		5.12.26.		տապանաքար՝ Ալայխանի	1716 թ.		S	հվ-աե եզրին

6.				ԵԿԵՂԵՑԻ Ս. ՍԱՐԳԻՍ	վրկ՝ 19-րդ դ.	հվ-ամ մասում	S	
	6.1.			խաչքար	9-10-րդ դդ.		Հ	բեմին
	6.2.			խաչքար	9-10-րդ դդ.		Հ	բեմին
	6.3.			գերեզմանոց	9-16-րդ դդ.		S	եկեղեցու շուրջը
		6.3.1		տապանաքար՝ Գասպարի	1581 թ		S	հվ-աե կողմում
		6.3.2		տապանաքար՝ Գրիգորի	1581 թ.		S	հվ-աե կողմում
		6.3.3		տապանաքար՝ Թորոսի	1581 թ.		S	հվ-աե կողմում
7.				ԽԱՉՔԱՐ	9-րդ դ.	գ. մ.	Հ	Հայրիկ Մանուկյանի տան մոտ, նորակառույց սրբատեղիում
8.				ԽԱՉՔԱՐ	9-րդ դ.	գ. մ.	Հ	«Թաթոյի մատուռ» սրբատեղիում, ստորին կեսը չի պահպանվել
9.				ԽԱՉՔԱՐ	9-րդ դ.	գ. մ.	Հ	Հրանտ Շահբազյանի տան մոտ, նորակառույց սրբատեղիում
10.				ԽԱՉՔԱՐ	9-րդ դ.	գ. մ.	Հ	Թամար Մկրտչյանի տան մոտ, նորակառույց սրբատեղիում, բեմին, վերնամասը՝ չի պահպանվել
11.				ԽԱՉՔԱՐ	11-12-րդ դդ.	գ. մ.	Հ	«Թաթոյի մատուռ» սրբատեղիում
12.				ԽԱՉՔԱՐ	14-15-րդ դդ.	1,2 կմ հվ	Հ	նորակառույց մատուռում
13.				ԽԱՉՔԱՐ	14-15-րդ դդ.	1,2 կմ հվ	Հ	նորակառույց մատուռում
14.				ԽԱՉՔԱՐ	1577 թ.	գ. մ.	Հ	Հրանտ Շահբազյանի տան մոտ, նորակառույց սրբատեղիում, ստորին մասը և վերին ձախ անկյունը՝ կոտրված
15.				ԿՈԹՈՂ	7-րդ դ.	ամ մասում	Հ	սար տանող ճանապարհին
16.				ՋԻԹՀԱՆ՝ ԹՈՒՄՈՅԻ	19-20-րդ դդ.	գ. մ.	S	Իգիթ Մկրտչյանի տան մոտ

Վերոհիշյալ ցանկով ներկայացված հուշարձանների տեղադիրքերը համադրվել են նախատեսվող գործունեության տարածքի հետ, որի արդյունքներով հաստատված է, որ նախատեսվող գործունեության տարածքում կամ հարևանությամբ՝ մինչև շուրջ 500մ շրջագծով տարածքներում թվարկված հուշարձաններից որևէ մեկը տեղակայված չէ:

4. ՆԱԽԱԳԾԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԶՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ

4.1. Զրոյական տարբերակ

Զրոյական կամ առանց գործողության տարբերակ նշանակում է, որ որևէ փոփոխություն տեղի չի ունենում և տեղում կլինիկական թափոնների վնասազերծում չի իրականացվում: Այս դեպքում՝

- կլինիկական թափոնների վնասազերծման գործընթացի արդյունքում բնապահպանական և սոցիալական ազդեցության հետ կապված ռիսկեր կամ վտանգներ չեն առաջանա,
- կենսամիջավայրի վրա լրացուցիչ տեխնածին ներգործություն և ճնշում չի առաջանա:

Մյուս կողմից զրոյական տարբերակի ընտրության դեպքում առկա են այլ բնապահպանական ռիսկեր, այդ թվում.

- տարածաշրջանի բժշկական կենտրոններում առաջացած թափոններ պետք է տեխափոխվեն համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպությունների պահեստներ: Այդպիսի կազմակերպությունները գտնվում են Երևան և Վաղարշապատ քաղաքներում: Այս հանգամանքը առաջացնում է բազմաթիվ դժվարություններ տարածաշրջանի բժշկական կենտրոնների համար, քանի որ Երևան և Վաղարշապատ քաղաքները գտնվում են զգալի հեռավորության վրա և տեղափոխությունները շատ ծախսատար են: Բացի այդ վտանգավոր թափոնների տեղափոխումը նույնպես լիցենզավորվող գործունեություն է, իսկ տարածաշրջանի բժշկական կենտրոնների մեծ մասը լիցենզավորված չէ և սա մեծ խնդիր է դրանց համար:
- Նշված պայմաններում, արդյունավետ վերահսկողության բացակայության պայմաններում, տարածաշրջանի բժշկական կենտրոնները կարող են առաջացած թափոնները առանց վնասազերծման տեղափոխել մոտակա աղբավայրեր, որոնք նախատեսված չեն ապահովել թափոնների անվտանգ տեղակայում:
- Չեն ստեղծվի նոր աշխատատեղերի և դրա արդյունքում տեղի բնակչության եկամուտների ավելացում:

4.2. Քննարկվող տարբերակներ

Կլինիկական և այլ օրգանական թափոնների վնասազերծումը հիմնականում իրականացվում է այրման, ջերմային մշակման/ախատահանման եղանակներով կամ ստորգետնյա պահեստավորմամբ: Երրորդ եղանակը ի սկզբանե բացառվել է և դիտարկվել են միայն առաջին երկու տարբերակները:

4.2.1. Այրում

Համաշխարհային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առավել տարածված վնասազերծման միջոցը թափոնների այրումն է: Ժամանակակից կիզարանները թույլ են տալիս գործնականում ամբողջությամբ վնասազերծել կլինիկական թափոնները:

Այս տարբերակի առավելություններն են.

- Թափոնների արագ և լիարժեք ոչնչացում
- Թափոնների երկարատև պահեստավորման բացառում
- Թափոնների տեղափոխման անհրաժեշտության բացառում:

Տարբերակի թերությունները.

- Ոչ բոլոր թափոնները կարելի է այրել,
- Առաջանում են այրման արգասիքների արտանետումներ,
- Բարձր ջերմային ռեժիմում աշխատանքի անվտանգության խնդիրներ:

4.2.2. Ջերմային վնասազերծում /ախտահանում/

Վարակիչ թափոնների վնասազերծման առավել տարածված եղանակը ջերմային ախտահանումն է: Այն հիմնականում իրականացվում 120 – 130^{0}C պայմաններում, սուր շոգու միջոցով:

Այս տարբերակի առավելություններն են.

- Ցածր ծախսայնություն
- Թափոնների երկարատև պահեստավորման բացառում
- Թափոնների տեղափոխման անհրաժեշտության բացառում:

Տարբերակի թերությունները.

- Ոչ բոլոր թափոնները կարելի է վնասազերծել ջերմային ախտահանման միջոցով:

4.2.3. Ընտրության հիմնավորում

Քննարկելով բոլոր հանգամանքները ընտրվել է այրման տարբերակը, քանի որ երկրորդ տարբերակն արդեն իսկ լայնորեն օգտագործվում է գործող բժշկական կենտրոններում առկա ավտոկլավներում, և խնդիր են ներկայացնում այն թափոնատեսակները, որոնք չեն կարող վնասազերծվել ավտոկլավային եղանակով:

5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

5.1. Վնասազերծման ենթակա թափոնների բնութագրերը

Բժշկական թափոնները, կազմակերպություններում պացիենտների հետազոտության, բուժման, բուժկանխարգելիչ աշխատանքների կամ գիտական հետազոտությունների արդյունքում առաջացած թափոններ են, որոնք բաժանվում են՝

1) վարակիչ թափոնների, որոնք իրենց հերթին դասակարգվում են՝

ա. միկրոկենսաբանական թափոններ

բ. ախտաբանաանատոմիական թափոններ

գ. կենսաբանական հեղուկներ

դ. սրածայր թափոններ

2) քիմիական թափոններ - ախտորոշիչ և օգտագործման համար ոչ ենթակա քիմիական նյութեր, ինչպես նաև մաքրման, ախտահանման և այլ գործընթացների ընթացքում առաջացող նյութեր, որոնք ունեն թունավոր, քայքայիչ, դյուրավառ հատկություններ

3) դեղագործական թափոններ - ժամկետանց և օգտագործման համար ոչ պիտանի դեղեր, պատվաստանյութեր, շիճուկներ և դեղագործական այլ ապրանքներ:

Նշված թափոնները դասվում են վտանգավոր թափոնների շարքին, ուստի դրանց վնասազերծման գործունեությամբ զբաղվելը ենթակա է լիցենզավորման, որն իրականացնում է ՀՀ կառավարությունը՝ փորձաքննական եզրակացության հիման վրա:

Նախատեսվող բժշկական թափոնների վնասազերծման գործունեությունն ունի իր կարևորությունը՝ ինչպես բնապահպանական, այնպես էլ առողջապահական տեսանկյունից, քանի որ վերջինիս իրականացումը կարող է նպաստել վտանգավոր թափոնների հեռացման և, տեղադրման հետ կապված, շրջակա միջավայրի վրա ազդեցության և մարդու առուղջության հետ կապված հիմնախնդիրների լուծմանը:

5.2. Տարածքի նախապատրաստումը

Նախատեսվող գործունեության համար ներկայացվող տարածքը զբաղեցնում է 0.138 հա մակերես, որի վրա նախատեսվում է կառուցել 1 հարկանի արտադրական մասնաշենք:

Շինության ճակատները նախատեսվում է իրականացնել տրավերտինե կամ տուֆե սալերով:

Կառուցապատման մակերեսը՝ 932 ք.մ., որը կազմում է ամբողջ տարածքի 67.53 տոկոսը: Շինության մակերեսը՝ 692 ք.մ.: Շինության բարձրությունը՝ 4 մ:

Շինարարության ընթացքում լանդշաֆտի փոփոխություն չի նախատեսվում, քանի որ նախ՝ այդ տարածքում չկա ձևավորված բնական լանդշաֆտ, իսկ ագրոլանդշաֆտի վրա ազդցեությունը ոչ էական է, հաշվի առնելով շինարարության փոքր ծավալները:

Տարածքի ջրամատակարարումը, գազամատակարարումը և հոսանքի մատակարարումը նախատեսվում է իրականացնել համայնքի տարածքում առկա ՀԷՑ և Գազպրոմ Արմենիա ընկերությունների ենթակառուցվածներից: Ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել բնակավայրի ջրացանցից, համայնքապետարանի հետ համապատասխան պայմանգրի հիման վրա:

Ստորև ներկայացված են կառուցապատման ուրվագծային սխեմաները:



Նկար 3. Տարածքի կառուցապատման սխեման



Նկար 4. Արտադրական մասնաշենքի հատակագիծը

Շինարարական աշխատանքների սկզբնական մասում իրականացվում է կառուցապատման տարածքների բերրի հողի կտրում և տեղափոխում: Ըստ տեղում կատարված հողաճածկի ուսումնասիրության բերրի հողաշերտի հզորությունը տատանվում է 18–24 սմ, միջին՝ 21 սմ: Կառուցապատվող մակերեսը՝ 932 քմ. Համապատասխանաբար հանվող ծավալը կկազմի՝ մոտավորապես 200 խ.մ. (195.72 խ.մ.):

ՀՀ կառավարության 08.11.2011թ. N1396 որոշման պահանջները ապահովելու և հողաբուսաշերտի որակական ցուցանիշների վատթարացումը բացառելու նպատակով, կտրվող բերրի հողաշերտը անմիջապես տեղափոխվում է վերը բերված հատակագծի կանաչապատման տարածք և փռվում է այնտեղ՝ հավասարաչափ:

5.3. Տեխնոլոգիական գործընթացների նկարագրությունը

Ուսումնասիրելով ՀՀ գործող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի և ԵՄ դիրեկտիվների պահանջները, ինչպես նաև շուկայում առկա առաջարկները, սույն նախաձեռնության ձեռնարկողը ընտրել է Ղազախական «Պրոֆիլ - Մ» ընկերության արտադրության «Վեստա Պլյուս» վառարան-կիզարանը (ТОО «Профиль-М», модульная мобильная печь «Веста Плюс»):

Նշված վառարանը փորձարկվել է Տեմիրտաու քաղաքի ձեռնարկություններում և լայնորեն կիրառվում է ՂՀ և ՌԴ տարբեր քաղաքներում:

Ըստ վառարանի տեխնիկական անձնագրի այն նախատեսված է տարբեր տեսակի և ծագման թափոնների այրման համար, այդ թվում.

- թռչնաֆերմաների թափոններ,
- յուղոտված լաթեր,
- համակարգչային տեխնիկայի մասեր,
- բանեցված յուղեր,
- բանեցված զտիչներ (ֆիլտրեր),
- բժշկական (կլինիկական) թափոններ,
- ժամկետանց դեղորայք,
- թմրանյութեր և հոգեմետ միջոցներ
- կենցաղային աղբ
- կենսաօրգանական թափոններ, այդ թվում քիմիական, սննդի և այլ արտադրությունների:

Կայանքում նախատեսվում վնասազերծել միայն կլինիկական օրգանական թափոններ, առանց դեղամիջոցների և անասնապահական ֆերմաների թափոնների:

Նկար 5. Վառարանի տեխնոլոգիական սխեման.



Սարքերի և հանգույցների ցանկը.

1. Հորիզոնական հնոց
2. Ուղղահայաց հնոց
3. Շամոտային հանգույց
4. Ջրային հովացմամբ ծխատար
5. Այրիչ
6. Օդամղիչ
7. խարսխային ամրակներ
8. Կցման /ամրացման/ հանգույցներ
9. Ջրի արտազատման/դատարկման ծորակ
10. Մոխրի հավաքման խուց
11. Բեռնման հանգույց /պատուհան/
12. Այրիչի անցք
13. Գազածխային խողովակի ամրացման շրջանակ

Կախված թափոնների կազմից, կարող է օգտագործվել լրացուցիչ վառելիք: Ըստ վառարանի տեխնիկական անձնագրի կարելի է օգտագործել տարբեր տեսակի վառելիք, սակայն ներկայացվող կայանքում նախատեսվում է օգտագործել միայն բնական գազ:

Աղյուսակ 5. 1. Վառարանի տեխնիկական բնութագրերը.

№	Ցուցանիշի կամ բնութագրի անվանումը	Նորմատիվը
1	Աշխատանքային ջերմաստիճանը հնոցներում (⁰C). - առաջին հնոցի ցանցի /կոլոսնիկային/ վրա - հնոցի ելքին	 1000 1350
2	Վառելիքի տեսակը	հեղուկ, գազային
3	Այրնման կայունացման ժամանակը, րոպե	10 - 25
4	Չայրված մասնիկների լրայրման ժամանակը, վրկ	3 - 5
5	Վառարանի տարեկան աշխատաժամերը, ժամ/տարի	4800
6	Վառարանի արտադրողականությունը, կգ/ժամ	120
7	Վառարանի զանգվածը, տ	4
8	Հնոցի ծավալը, մ^3	1. 0
9	Ծխատարի բարձրությունը, մ	10 - 12
	Ծխատարի տրամագիծը, մմ	300
10	Վառարանի չափերը, մ	2. 8 x 1.2 x 2.6

Ըստ վառարանի տեխնիկական անձնագրի, այրման արդյունքում առաջացած մոխիրը կարելի է տեղափոխել կենցաղային աղբավայր:

Մոխիրը դատարկվում է հետևյալ կերպ՝ սարքի անջատումից և բնական եղանակով հովացումից հետո, սարքի ստորին մասի փականի տակ տեղադրվում է ստվարաթղթե պարկ, բացվում է փականը և վառարանի պարունակություն լցվում է պարկի մեջ: Յուրաքանչյուր պարկ կարող է պարունակել մինչև 50 կգ մոխիր, սակայն աշխատանքի անվտանգության տեսակետից ելնելով, նախատեսվում է յուրաքանչյուր պարկի մեջ լցնել մինչև 30 կգ մոխիր:

Մոխրի յուրաքանչյուր խմբաքանակից վերցվում է փոքր քանակի նմուշ, դրանք հավաքվում են և եռամսյակը մեկ անգամ ուղարկվում համապատասխան լիցենզավորված լաբորատորիա ստուգման նպատակով:

Պոլիէթիլենային և այլ պլաստիկ բոլոր նյութերը այրվում են:

Տեխնոլոգիական գործընթացը ներառում է հետևյալ գործողությունները.

Պատվիրատուների կողմից թափոնները տեղափոխող տրանսպորտային միջոցները մուտք են գործում արտադրական մասնաշենքի ախտահանման հատված, որտեղ ախտահանվում են, որից հետո թափոնները տեղափոխվում են վառարանային տեղամաս կամ սառնարանային հանգույց:

Ախտահանումը նախատեսված է տարածքի մուտքի հատվածում, ախտահանումը կատարվում է աերոզոլների միջոցով, որի արդյունքում թափոն կամ արտահոսք չի առաջանում:

Նախատեսված է թափոնները ընդունել այնպիսի քանակներով, որ դրանք անմիջապես ուղարկվեն այրման: Սակայն այն դեպքերի համար, երբ թափոնների

քանակը գերազանցում է վնասազերծման օրական հզորությունը, նախատեսված է սառնարանային հանգույց /սառնարան/։

Մինչ վառարան տեղափոխելը մագնիսների միջոցով թափոնից հանվում են մետաղական մասերը՝ լանցետներ, ասեղներ, այլն, որոնք տեղավորվում են ստվարաթղթե արկղերի մեջ։ Հաշվի առնելով մետաղական մասերի փոքր ծավալները, դրանք ժամանակավոր պահվում են նույն սենյակի անկյունում։ Հավաքելով 1 – 2 արկղ, դրանք տեղափոխվում են տարածաջրանում գործող մետաղների թափոններ ընդունող կազմակերպությունների պահեստներ։

Նախատեսվում է առանձին սենյակում տեղադրել Polair կամ համարժեք տեսակի սառնարանային խուց, 4. 41 մ^3 տարողությամբ, որի տեխնիկական ցուցանիշները թույլ են տալիս ապահովել մինչև մինուս 25^{0}C ջերմաստիճան։

Համաձայն N 2.1.3-3 սանիտարական կանոնների (16. ՀՀ առողջապահության նախարարի 4 մարտի 2008 թ. N 03-Ն հրաման).

«35. Վարակիչ թափոնները ժամանակավոր պահման հատուկ տարածքում կարող են պահվել ձմռանը՝ 72 ժամից, իսկ ամռանը՝ 48 ժամից ոչ ավելի։

35. 1. Փոքր քանակությամբ բժշկական թափոն առաջացնող բժշկական կազմակերպությունում բժշկական թափոնները կարող են պահվել 3 – 8 ^{0}C սառնարանային պայմաններում՝ մեկ շաբաթից առավելագույնը չորս շաբաթվա տևողությամբ, կամ մինչև մինուս 18^{0}C ջերմաստիճանի պայմաններում՝ մինչև երկու ամիս։»

Ընդունված թափոնները տրանսպորտային միջոցներից կամ սառնարանային հանգույցից տեղադրվում են սայլակի մեջ և տեղափոխվում վառարանի սնուցման հարթակ։ Միացվում են հիմնական և երկրորդ աստիճանի այրիչները և ջերմաստիճանը առաջնային հնոցում հասնում է 800 - 1000 C^0, իսկ երկրորդային հնոցում՝ 1200 – 1350 C^0, որից հետո սայլակի պարունակությունը լցվում է հնոցի մեջ։ Առաջին աստիճանի հնոցը ունի կոնաձև կառուցվածք և թափոնների այրումից առաջացած պինդ մասնիկները լցվում են կոնի տակ ընդունիչ տարողության մեջ։ Ծխագազերը մղվում են երկրորդ աստիճանի հնոց, որն ունի գլանաձև կառուցվածք։ Այստեղ բարձր ջերմաստիճանը թույլ է տալիս այրել ցանկացած մնացորդային օրգանական միացություն, որը կարող է մնալ գազաօդային հոսքում, այդ թվում դիօքսինները և ֆուրանները։

Ծխագազերը տրվում են արտաքին շապիկով խողովակ, որում հովանալով ծխագազերը ծխատարի միջոցով արտանետվում են մթնոլորտ։

Կայանքի բեռնումը կարելի է կրկնել յուրաքանչյուր ժամը մեկ։

Համալիրի ժամային արտադրողականությունը կազմում է 120 կգ, վնասազերծման մեկ ցիկլը՝ 1 ժամ։ Օրական առավելագույն արտադրողականությունը՝ 2880 կգ։

Համալիրը կաշխատի 4800 ժամ/տարի։ Տարեկան առավելագույն արտադրողականությունը կարող է կազմել՝ 576 տ։

Կլինիկական և այլ օրգանական թափոնների ջերմային վնասազերծման ընթացքում կառաջանան այրման մնացորդներ (մոխիր)։ Ըստ նույնանման համալիրների տվյալների՝ այրման մնացորդների քանակը կարող է կազմել թափոնների ընդհանուր քանակի 2 - 5 տոկոսը, տարեկան առավելագույն արտադրողականության դեպքում՝ 11. 5 – 28. 8

տ/տարի: Այս թափոնը ՀՀ բնապահպանության նախարարի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրամանի հավելվածում ներկայացված է 3130180001013 ծածկագրի տակ՝ “թափոնների այրման մոխիր (այրման վառարաններ)” տողում:

5.4. Սանիտարա-պաշտպանիչ գոտի

245-71 սանիտարական նորմերով նմանատիպ թափոնների այրման/ոչնչացման կայանքների համար սանիտարապաշտպանիչ գոտի չի սահմանվում: Բոլոր դեպքերում, ինչպես ցույց է տրվել իրադրային սխեմայում, հեռավորությունը մոտակա բնակելի թաղամասից կազմում է 530 մ:

Կցվում է նաև համայնքի ղեկավարի գրությունը, շրջակայքի վերաբերյալ:

6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

6.1. Օդային ավազան

Կայանքի շահագործման ընթացքում վնասակար նյութերի արտանետումները առաջանում են գազային վառելիքի և թափոնների այրման արդյունքում:

6.1.1. Թափոնների այրման արգասիքների հաշվարկ

Նախատեսվող կայանքի (կիզարանի) տեխնիկական փաստաթղթերում չեն բերվում վնասակար նյութերի արտանետումների տվյալները, ուստի կլինիկական թափոնների այրման ժամանակ առաջացող վնասակար նյութերի արտանետումների հաշվարկի համար հիմք են հանդիսացել ԵՄ “Աղտոտող նյութերի մթնոլորտ արտանետումների գույքագրման ուղեցույց”-ի կողմից առաջարկված տեսակարար գործակիցները (The joint EMEP/EEA Air Pollutant Emission Inventory Guide book, 2013):

Համաձայն նշված ուղեցույցի տարբեր տեսակի թափոնների այրման համար սահմանված են սահմանափակող ցուցանիշներ /տես ուղեցույցի հավելված 2/:

Ներկայացվող կայանքը արտադրված է համաձայն ԵՄ N2000/76/EC դիրեկտիվի պահանջներին, համապատասխանաբար հաշվարկների համար ԵՄ ուղեցույցը կիրառելի է:

Սույն հաշվետվությունում կատարվել են կլինիկական թափոնների այրման ընթացքում ատաջացող նյութերի արտանետումների հաշվարկներ, որոնք համեմատվել են ՀՀ-ում գործող սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՍԹԿ) հետ:

Հաշվարկները կատարվել են ըստ EMEP/EEA ձեռնարկի տեսակարար գործակիցների՝ բազմապատկելով այրվող թափոնների քանակների վրա: Ձեռնարկում ներկայացված են մի շարք գործակիցներ, որոնցից ընտրվել են հիմնականները, քանի որ մնացածը ներկայացված են մգ ցուցանիշով:

Այրման ենթակա թափոնների տարեկան առավելագույն քանակը կազմում է 576 տ/տարի: Կայանքի ժամային առավելագույն արտադրողականությունը կազմում է 120

կգ/ժամ: Հաշվարկի համար օգտագործվել են EMEP/EEA ձեռնարկի աղյուսակ 3.1-ում բերված արտանետումների տեսակարար գործակիցները:

Հաշվարկների արդյունքները բերված են աղյուսակ 5.1-ում:

Աղյուսակ 6.1. Թափոնների այրման արդյունքում առաջացող արտանետումների բնութագրերը և քանակները

Աղտոտող նյութի անվանումը	ՍԹԿ միանվագ առավելա-գույն, մգ/մ³	Չափման միավոր	Տեսակարար գործակիցը[4]	Արտանետումները	
				տ/տարի	գ/վրկ
1	2	3	4	5	6
NO_2	0.2	կգ/տ թափոն	1.8	1. 04	0. 061
CO	5.0	կգ/տ թափոն	1.5	0. 864	0. 05
Սահմանային ածխաջրա-ծիններ	1.0	կգ/տ թափոն	0.7	0. 4	0. 023
SO_2	0.5	կգ/տ թափոն	1.1	0. 634	0. 037
Կախված մասնիկներ	0.5	գ/տ թափոն	2.3	1. 325	0. 077

6.1.2. Գազային վառելիքի այրման արտանետումների հաշվարկ

Նախատեսվող այրիչները կահավորված են ժամանակակից ավտոմատ կարգավորիչ սարքերով, ապահովելով նվազագույն արտանետումներ, սակայն քանի որ տեխնիկական անձնագրերում բերված չեն տեսակարար արտանետումների գործակիցները, վառելիքի այրման ընթացքում առաջացող վնասակար նյութերի արտանետումների հաշվարկը կատարվել է ըստ "Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами» մեթոդական ձեռնարկի: Հաշվարկները կատարվել են ըստ ձեռնարկի տեսակարար գործակիցների՝ բազմապատկելով բնական գազի ծախսվող ծավալների վրա: Ըստ նախնական հաշվարկի բնական գազի տեսակարար ծախսը կկազմի՝ 0. 1 մ³/կգ[5], 50մ³/տ, տարեկան պահանջվող առավելագույն ծավալը կկազմի՝ 576տ x 100մ³/տ = 57600մ³:

Աղյուսակ 6.2. Վառելիքի այրման արտանետումները

№	Արտանետվող նյութը	Արտանետման տեսակարար գործակիցը	Չափման միավորը	Արտանետում, տ/տարի	Արտանետում, գ/վրկ
1	NO_2	2.15	գ/մ³ գազ	0.124	0.0072
2	CO	12.9	գ/մ³ գազ	0.743	0.043

Արտանետվող նյութերի տարեկան ամփոփ քանակները և բնութագրերը բերված են աղյուսակ 6.3-ում:

Աղյուսակ 6.3. Արտանետումների ամփոփ քանակները և բնութագրերը

[4] The joint EMEP/EEA Air Pollutant Emission Inventory Guide book, 2013

[5] Среднихиммаш. Завод-изготовитель крематоров и инсинераторов. http://www.sverd.ru/products-and-services/oborudovanie/oborudovanie-dlya-pererabotki-obshhepromyishlennyix-otxodov/ustanovka-szhiganiya-promyishlennyix-i-byitovyix-otxodov.html

Ինչպես երևում է աղյուսակից, արտանետումների քանակները չնչին են և չեն

Նյութի անվանումը	ՍԹԿ միանվագ առավելագույն, մգ/մ^3	Վտանգավորության դասը	Նյութերի արտանետումը, տ/տարի	Նյութերի արտանետումը, գ/վրկ
Ազոտի օքսիդներ /ազոտի եկօքսիդի հաշվարկով/	0.2	2	1. 164	0. 0682
Ածխածնի օքսիդ	5.0	4	1.607	0. 093
Սահմանային ածխաջրածիններ	1.0	4	0. 4	0. 023
Ծծմբի երկօքսիդ	0.5	3	0. 634	0. 037
Կախված մասնիկներ	0.5	3	1. 325	0. 077

կարող էական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի և մերձակա բնակիչների առողջության վրա։

Աղյուսակ 6.4-ում բերված են արտանետումների աղբյուրների բնութագրերը և արտանետումների քանակները։

Աղյուսակ 6.4. Արտանետումների աղբյուրի բնութագրերը և արտանետումների քանակները

Արտադրության, տեղամասի անվանումը	Արտանետումների առաջացման աղբյուրները		Արտանետման աղբյուրը	Արտա-նետման աղբյուրի համարը	Արտանետման աղբյուրի բարձրությունը, H, մ	Աղբյուրի տրամա-գիծը, մ	Արտանետման արագությունը, մ/վրկ	Արտանետման ջերմաստիճանը T°C
	անվանումը	քանակը						
1	2	3	4	5	6	7	8	9
Թափոնների այրման վառարան	Գազային վառարան	1	Խողովակ	1	12.0	0.3	12.0	150

Աղյուսակ 6.4-ի շարունակությունը

Մաքրման ենթակա նյութերի Ապահովվածության գործակիցը, %	Մաքրման նվազագույն աստիճանը		Աղբյուրի կոորդինատները քարտեզ սխեմայի վրա				Նյութերի անվանումը	Արտանետումների քանակները	
	Մաքրման առավել. չափը, %							գ/վրկ	տ/տարի
			X_1	X_2	Y_1	Y_2			
10	11		12	13	14	15	16	17	18
100	-		32	-	24	-	❖ NO_2	0.0682	1.164
-	-						❖ CO	0.093	1.607
-	-						❖ Ածխաջրածիններ	0.023	0.4
							սահմանային	0.037	0.634
							❖ SO_2	0.077	1.325
							❖ Կախված մասնիկներ		

6.1.3. Գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկների արդյունքները

Արտանետումների ազդեցությունը գնահատելու նպատակով կատարվել են մթնոլորտում դրանց ցրման հաշվարկ և արդյունքները համեմատվել են սանիտարական նորմերի հետ:

Մթնոլորտում վնասակար արտանետումների ցրման հաշվարկները կատարվել են համակարգչի վրա, «Էռա» համակարգչային ծրագրով, 5.4-րդ աղյուսակում բերված տվյալների հիման վրա:

Բնակլիմայական պայմանները և նյութերի ֆոնային աղտոտվածության ցուցանիշները վերցվել են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության "Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն" ՊՈԱԿ գրությունից:
Հաշվարկների արդյունքները բերված են Հավելված 1-ում:

Ըստ այդ հաշվարկների աղտոտվածության առավելագույն մակարդակը բոլոր նյութերի համար գտնվում են թույլատրելի նորմերի սահմաններում:

Առավելագույն կոնցենտրացիաները ՍԹԿ մասով և մգ/մ³ ցուցանիշներով բերված են աղյուսակ 6. 5-ում:

Աղյուսակ 6.5. Գետնամերձ կոնցենտրացիաները

№	Աղտոտող նյութեր	Բնակելի գոտիների առավելագույն միանվագ ՍԹԿ[6], մգ/մ³	Գետնամերձ կոնցենտրացիա	
			ՍԹԿ մասով	մգ/մ³
1	Ազոտի երկօքսիդ	0.2	0.1122	0.002245
2	Ածխածնի օքսիդ	5	0.0834	0.417
3	Սահմանային ածխաջրածիններ	1	0.007	0.007
4	Ծծմբային անհիդրիդ	0.5	0.0535	0.0268
5	Կախված մասնիկներ (մուր)	0. 5	0.372	0.0558
6	Ազոտի և ծծմբի երկօքսիդների գումարային էֆեկտ	-	0.0976	-

6.2. Ջրային ռեսուրսներ

Նախատեսվող գործունեության համար ջուր օգտագործվելու է արտանետման արտադրական, ինչպես նաև անձնակազմի խմելու և տնտեսական նպատակների համար:

Ջրամատակարարումը կատարվելու է համայնքային ցանցից:

6. 2. 1. Արտադրական նպատակներով ջուրը կուտակվում է հատուկ տարողության մեջ, որտեղից պոմպով մղվում է արտանետման խողովակի շապիկի մեջ, որտեղից այն նորից հոսում է բաքի մեջ: Շրջանառու ջրի համակարգի ծավալը կազմում է

[6] "ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴՆ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԽՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻԱՆԵՐԻ-ՍԹԿ) ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ" ՀՀ կառավարության 2 փետրվարի 2006 թվականի N 160-Ն որոշում

2 մ³: Շրջանառու ջրի կորուստները համալրվում են թարմ ջրով, որի ծավալը հաշվարկվում է հետևյալ կերպ.

W = T x Q x K, որտեղ.

T՝ տարեկան աշխատաժամերը, 4800

Q՝ շրջանառու համակարգի ծավալը, 2մ³

K՝ կորստի գործակիցը, 0.05

W = 4800 ժամ/տարի x 2մ³ x 0.05 = 480 մ³/տարի:

Հաշվի առնելով տեղանքում տեխնիկական ջրի ցանցի բացակայությունը, ինչպես նաև ջրապահանջի չնչին քանակները՝ 1.32 մ³/օր, հովացման համար օգտագործվում է խմելու որակի ջուր:

Արտադրական ջրօգտագործման արյունքում արտահոսք չի առաջանում:

6.2.2. Խմելու կենցաղային ջրապահանջը կկազմի՝

$W = (n \times N + n_1 \times N_1) T$

Որտեղ՝ n – ինժեներա-տեխնիկական աշխատողների թիվն է - 3

N - ջրածախսի նորման՝ - 0.016մ³,

N_1 - բանվորների թիվն է - 7,

N_1 - ջրածախսի նորման բանվորների համար՝ - 0.025մ³/մարդ օր<

T –աշխատանքային օրերի առավելագույն թիվը՝ 365 օր/տարի:

W= (3 x 0.016 + 7 x 0.025) x 365 = 81.4 մ³/տարի, միջին օրեկան 0.223մ³:

Կենցաղային կեղտաջրերի քանակը կկազմի՝

V = W - (W x L), որտեղ.

L՝ կորստի գործակիցը, 0.05

V = 81.4 - (81.4 x 0.05) = 77.33մ³/տարի, միջին օրական՝ 0.21 մ³:

Կենցաղային կեղտաջրերը հավաքվելու են կեղտաջրերի հավաքման հորում՝ անջրթափանց հատակով և պատերով, որտեղից պարբերաբար կտեղափոխվեն մոտակա կոյուղու ցանց: Կեղտաջրերի հորը նախատեսվում է տեղադրել արտադրական շինության տակ: Հորի ծավալը նախատեսվում է 6 խ. մ., որը թույլ կտա հավաքել մեկամսյա ծավալ: Սակայն խնդիրներ չունենալու համար նախատեսվում է ամիսը երկու անգամ տեղափոխել կեղտաջրերը:

6.3. Թափոններ

Ըստ նախատեսված կայանքի տեխնիկական փաստաթղթերի և նմանատիպ կայանքների փորձի կլինիկական թափոնների այրման արդյունքում առաջանում է նստվածք՝ մոխիր, որի քանակը կարող է կազմել այրվող թափոնների 5 տոկոս: Ելնելով այս տվյալներից՝ թափոնների այրման կայանքում կարող է առավելագույնը առաջանալ 28.8 տ/տարի այրման մնացորդներ՝ մոխիր: Ըստ կայանքի տեխնիկական բնութագրավկայականի թափոնը անվնաս է և կարող է տեղափոխվել կենցաղային աղբավայր:

Այս թափոնը ՀՀ բնապահպանության /շրջակա միջավայրի/ նախարարի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրամանի հավելվածում ներկայացված է 3130180001013 ծածկագրի տակ՝ “թափոնների այրման մոխիր (այրման վառարաններ)” տողում:

Թափոնների նախապատրաստման փուլում առաջանում են մետաղական մասեր, որոնք ըստ ՀՀ բնապահպանության /շրջակա միջավայրի/ նախարարի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրամանի հավելվածի հանդիսանում են.

- Չտեսակավորված լեգիրված պողպատ պարունակող թափոններ (այդ թվում՝ պողպատի փոշի), դասիչ՝ 35120111 01 00 4, հաշվարկային քանակը՝ 0. 3 տ/տարի:
- Չտեսակավորված լեգիրված պողպատ պարունակող թափոններ (այդ թվում՝ պողպատի փոշի), 35120311 01 00 4, հաշվարկային քանակը՝ 0. 27 տ/տարի:

Մետաղական թափոնները հավաքվելու են պոլիէթիլենային պարկերում և տեղավորվում ստվարաթղթե արկղերում և 1 – 2 արկղ հավաքվելու դեպքում տեղափոխվում /վաճառվում/ են տարածաշրջանում գործող լիզենզավորված կազմակերպությունների պահեստներ:

6.4. Կենսաբազմազանություն

Նախատեսվող գործունեությունը անմիջական ազդեցություն բուսական և կենդանական աշխարհի վրա չունի:

Նախատեսվող տարածքը տարիներ շարունակ և ներկայուս նույնպես օգտագործվում է որպես գյուղատնտեսական հողեր և արոտավայրեր և հետևաբար այստեղ չեն արձանագրվել բնապահպանական տեսակետից արժեքավոր վայրի կենդանիների բնակավայրեր կամ վայրի բուսականություն:

Գործունեության ընթացքում ազդեցությունը կարող է կապված լինել թափոնների այրման ընթացքում առաջացող վնասակար նյութերի արտանետումների հետ: Սակայն ինչպես ցույց են տալիս արտանետումների ցրման հաշվարկները, սպասվող գետնամերձ կոնցենտրացիաները զգալիորեն ավելի ցածր են բնակավայրերի համար սահմանված նորմերից և հետևաբար չեն կարող նաև զգալի ազդեցություն ունենալ կենդանական և բուսական աշխարհի վրա:

6.5. Սոցիալական խնդիրներ

Հաշվի առնելով նախատեսվող կայանքի տեղադիրքը (հեռավորությունը գյուղից՝ 530 մ) և գործունեության բնույթը /տես ցրման հաշվարկներըՃ ներկայացվող կայանքը գործնականում չի ունենա ազդեցություն գյուղի բնակչության վրա:

Աշխատակազմի վրա ազդեցությունը պայմանավորված է թափոնների հետ աշխատելու և բարձր ջերմաստիճանային պայմաններում կատարվող գործընթացները կառավարելու հանգամանքով:

Նախատեսվում է առավելագույն արտադրողականության դեպքում ներգրավել 10 աշխատող, այդ թվում 3 ինժեներատեխնիկական աշխատող, 7 սպասարկող աշխատող, այդ թվում ջերմատեխնիկ, օպերատոր և բանվորներ:

6.6. Կումուլյատիվ (հավաքական) ազդեցություն

Նախատեսվող գործունեության ազդեցությունը լիարժեքորեն գնահատելու համար այն դիտարկվել է տարածքի բոլոր աղտոտող գործոնների հետ համալիր և շրջանի պոտենցիալի ենթատեքստում:

Տեխնածին ազդեցության տեսակետից կլինիկական թափոնների այրման կայանքի շրջանում հիմնական աղտոտման աղբյուր են հանդիսանում ավտոճանապարհներով անցնող ավտոտրանսպորտային միջոցները:

Հաշվի առնելով վերոհիշյալով պայմանավորված ֆոնային մակարդակը և դրա համեմատությամբ նախատեսվող գործունությունից ակնկալվող ազդեցության անհամեմատ փոք և ոչ էական բնույթը, հավաքական ազդեցություն նախատեսվող գործունեությունից չի սպասվում:

7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատումն իրականացվում է ըստ շրջակա միջավայրի բաղադրիչների: Տնտեսական վնասը հաշվարկվում է համաձայն ՀՀ կառավարության 27.05.2015 N 764-Ն որոշման:

Հնարավոր տնտեսական վնասը հաշվարկվում է՝

ՎՏ= ՀԱԳ + ՋԱԳ +ՕԱԳ ,

որտեղ՝

ՎՏ-ն հնարավոր տնտեսական վնասն է դրամային արտահայտությամբ,

ՀԱԳ-ն հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով (բնական միջավայրի աղտոտում, բնական ռեսուրսների աղքատացում, էկոհամակարգերի քայքայմանը կամ վնասմանը հանգեցնող շրջակա միջավայրի բացասական փոփոխություններ) պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 92-Ն որոշման համաձայն.

ՋԱԳ-ը ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության ուղղակի և անուղղակի ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկում է ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի N 1110-Ն որոշման համաձայն:

ՕԱԳ-ն մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 91-Ն որոշման համաձայն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հողային և ջրային ռեսուրսների վրա որևէ ազդեցություն չի նախատեսվում, հաշվարկում ներառված է միայն ՕԱԳ-ն:

Տնտեսական վնասը դա շրջակա միջավայրին հասցված վնասի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների արժեքն է՝ արտահայտած դրամական համարժեքով:

Տնտեսական վնասը հաշվի է առնում՝

- բնակչության առողջության վատթարացման հետ կապված ծախսերը,

- գյուղատնտեսությանը, անտառային և ձկնային տնտեսություններին հասցված վնասը,
- արդյունաբերությանը հասցված վնասը:

Տնտեսական վնասը հաշվարկվել է համաձայն ՀՀ կառավարության 25.01.2005թ. N 91-Ն որոշմամբ հաստատված “Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ”-ի

Յուրաքանչյուր արտանետման աղբյուրի համար տնտեսությանը հասցված վնասը գնահատվում է 1-ին բանաձևով՝

$У = Ш_q Ф_g \sum В_i К_i$, որտեղ

У -ն ազդեցությունն է, արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամով,

$Ш_q$ -ն աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, համաձայն նշված կարգի 9-րդ աղյուսակի ընդունվում է 4:

$Ф_g$-ն փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է՝ ելնելով բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից: Սույն կարգի համաձայն $Ф_g = 1000$ դրամ:

$В_i$ -ն **i**-րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է: Ազոտի երկօքսիդի՝ 12.5, ածխածնի օքսիդ՝ 1, կախված մասնիկներ /մուր/՝ 41, ծծմբային անհիդրիդի՝ 16.5, ածխաջրածինների՝ 3.16:

$К_i$ –ն տվյալ (i-րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է,

$К_i$ գործակիցը որոշվում է 2-րդ բանաձևով՝

$К_i = q (3 S_{Ui} - 2 УТУ_i), S_{Ui} > УТУ_i$ (2)

որտեղ՝

$УТУ_i$ -ն i-րդ նյութի սահմանային թույլատրելի տարեկան արտանետման քանակն է՝ տոննաներով:

S_{Ui} -ն i նյութի տարեկան փաստացի արտանետումներն են՝ տոննաներով:

Հաշվի առնելով, որ ցրման արդյունքում ստացված գետնամերձ կոնցենտրացիաները չեն գերազանցում ՍԹԿ նորմերը՝ $К_i = S_{Ui}$:

q = 1՝ անշարժ աղբյուրների համար,

q = 3՝ շարժական աղբյուրների համար:

Այն նյութերի համար, որոնց նորմատիվային կոնցենտրացիան պետական ստանդարտով չի սահմանված, ազդեցությունը չի գնահատվում:

Հաշվարկի արդյունքները բերված են աղյուսակ 7.1-ում: Արտանետվող նյութերի քանակները վերցվել են 6.4. աղյուսակից:

Աղյուսակ 7.1. Տնտեսական վնասի ցուցանիշները

Արտանետվող նյութերի անվանումը	Հաշվարկի համար անհրաժեշտ ցուցանիշները			$В_i$	$Ш_q$	Տնտեսական վնասը. ՀՀ դրամ
	S_i	q	$К_i=Si$ x q			$У = Ш_q Ф_g \sum В_i К_i$
Ազոտի երկօքսիդ	1.164	1	1.164	12.5	4	58200
Ածխածնի օքսիդ	1.607	1	1.607	1	4	6428
Ածխաջրածիններ սահմանային	0.4	1	0.4	3.16	4	5056
Ծծմբային անհիդրիդ	0.634	1	0.634	16.5	4	41844

Պինդ մասնիկներ /մուր/	1.325	1	1.325	41.5	4	219950
Ընդամենը						331478

Ընդամենը տնտեսական վնասը կկազմի 331478 դրամ:

8. Ազդեցությունների կանխարգելմանը, մեղմացմանն ու նվազեցմանն ուղղված միջոցառումները

8.1. Կլինիկական թափոնների հետ վարման և դրանց գործածության ընդունված կարգը

Առողջապահական և այլ կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի գործունեության ընթացքում առաջացած վտանգավոր բժշկական թափոնների (բացառությամբ՝ բժշկական ռադիոակտիվ թափոնների) անվտանգ գործածությունը, գոյացման կանխարգելումը, հավաքումը, ժամանակավոր պահումը, վնասազերծումը, ոչնչացումը, փոխադրումը և թաղումը կարգավորվում են ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ «ԲԺՇԿԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻԳԻԵՆԻԿ ԵՎ ՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ» N 2.1.3-3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՐԱՄԱՆՈՎ: Կազմակերպությունների անձնակազմերին ներկայացվող ընդհանուր պահանջները կարգավորվում են նշված հրամանով հաստատված հավելվածներով /Վարակիչ բժշկական թափոնների ախտահանման/վարակազերծման եղանակը և պայմանները կարգավորվում են նշված հրամանի հավելված 2-ի համաձայն/:

Վերամշակման ենթակա թափոնների տեսակները և քանակը սահմանվում են կազմակերպության բժշկական թափոնների գործածության Ակտով, որով կարգավորվում են բժշկական թափոնների գործածության՝ ներառյալ դրանց ըստ տեսակի առանձնացման, տարողությունների և բեռնարկղերի մեջ տեղադրման, մեկուսացման, տեղափոխման և ընդունման, վնասազերծման և վարակազերծման բոլոր փուլերի իրականացումը նկարագրող ընթացակարգերը, դրանց կատարման ժամանակացույցը, վնասազերծման արդյունքում ստացված թափոնի հեռացման, թաղման և/կամ հետագա օգտագործման կարգը: Վերամշակման նպատակով բժշկական թափոններն այլ կազմակերպություններին պետք է տրամադրվեն այնպես, որպեսզի բացառվի դրանց կրկնակի օգտագործումը բժշկական նպատակներով: Արգելվում է բժշկական թափոնների բեռնաթափումը բաց աղբավայրերի մակերեսներին:

Բժշկական թափոնների գործածությունը կարգավորելու և դրա հետ կապված մարդու առողջության անվտանգության պահանջները ապահովելու նպատակով գործող սանիտարական կանոնների պահանջների հիման վրա յուրաքանչյուր կազմակերպության տնօրեն ընդունում է բժշկական թափոնների անվտանգ գործածությունը կարգավորող գործողությունների իրավական ակտը (այսուհետ՝ Ակտ): Բժշկական թափոնների գործածության ակտը իրենից ներկայացնում է փաստաթուղթ, որը նկարագրում է կազմակերպության գործառույթները՝ թափոնների գոյացումից մինչև հեռացում:

8.2. Բժշկական թափոնների հավաքմանը, ժամանակավոր պահմանը ներկայացվող պահանջներ

Շրջակա միջավայրի վրա, հիվանդների և առողջապահության համակարգի աշխատողների վրա ուղղակի կամ անուղղակի բացասական ազդեցությունները կանխարգելելու նպատակով բժշկական թափոնների գործածության համար կարևոր են հետևյալ պահանջների իրականացումը:

1. Բժշկական թափոնները հավաքվում (տարանջատվում) և պահվում են առանձին՝ ըստ տեսակների՝ բացառելով դրանց միմյանց խառնվելը:

2. Բժշկական թափոնները՝ բացառությամբ վարակիչ միկրոկենսաբանական թափոնների և միկրոկենսաբանական հեղուկների, դրանց գոյացման վայրում անմիջապես առանձնացվում են և տեղադրվում դրանց հավաքման համար հատուկ տեղադրված և «Բժշկական վտանգավոր թափոններ» մակնշումը կրող տարողությունների մեջ:

3. Բժշկական թափոնները՝ բացառությամբ սրածայր թափոնների և կենսաբանական հեղուկների, դրանց գոյացման տեղում տեղադրվում են դիմացկուն, անթափանց, կողքերից և հատակից արտահոսք չունեցող մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային տոպրակներում և (կամ) մեկանգամյա կամ բազմակի օգտագործման կարծր տարողությունների մեջ:

4. Բոլոր տեսակի բժշկական թափոնները տարողությունների մեջ տեղադրվելուց հետո հերմետիկորեն փակվում են, իսկ ախտաբանաանատոմիական, միկրոկենսաբանական, սրածայր և քիմիական թափոնները նաև կնքվում, լրացվում է պիտակ՝ դրա վրա նշելով տեղադրված բժշկական թափոնի տեսակը, դրատարողությունում տեղավորելու կոնկրետ ժամը, օրը, ամիսը, տարեթիվը, իր անունը և ազգանունը, ինչպես նաև կազմակերպության անվանումը:

5. Լրացված պիտակը ամրացվում է տարողությանը, որն անմիջապես տեղափոխվում է բժշկական թափոնների ժամանակավոր պահման հատուկ տարածք:

6. Փակված տարողությունները կարող են բացվել միայն բժշկական թափոնների վնասազերծման նպատակով:

7. Բեռնարկղերի մեջ տեղադրված բժշկական թափոնների ժամանակավոր պահման համար կազմակերպությունում առանձնացվում է հատուկ տարածք:

8. Ժամանակավոր պահման հատուկ տարածքը պետք է պաշտպանված լինի մթնոլորտային տեղումներից և այլ գործոնների ուղղակի ազդեցությունից՝ քամի, արևի ճառագայթներ և այլն:

9. Տարածքը պետք է ախտահանվի պարբերաբար և ապահովված լինի ջրի ծորակներով և ջրահեռացման ցանցով, պատերն ու առաստաղն ունենան անջրաթափանց ծածկույթ, տարածքի դռները ապահովեն բժշկական թափոնների բեռնարկղերն ավտոտրանսպորտի միջոցով տեղափոխելու հնարավորությունը:

10. Պետք է բացառվի կենդանիների, այդ թվում՝ միջատների և կրծողների շփումը բժշկական թափոնների հետ, ինչը ապահովելու համար պարբերաբար իրականացվում է միջատասպան (դեզինսեկցիա) և կրծողասպան (դեռատիզացիա) միջոցառումներ:

12. Ժամանակավոր պահման հատուկ տարածք կարող են մուտք գործել միայն բժշկական թափոնը հավաքելու, տեղադրելու, փակելու և տեղափոխելու պարտականություն ունեցող աշխատողները:

Բժշկական թափոնների գործածության Ծրագրով սահմանված ժամանակացույցի կատարման նպատակով յուրաքանչյուր կազմակերպություն վարում է հատուկ մատյան՝ բժշկական թափոնի գոյացման տեղում և ժամանակավոր պահման հատուկ տարածքում:

8.3. Մթնոլորտային օդ

Ազդեցությունները նվազեցնելու համար կարևոր են հետևյալ միջոցառումների կատարումը.

- կլինիկական թափոնների վնասազերծման համար նախատեսված է տեղադրել երկաստիճան ջերմային վնասազերծման կայանք,
- ապահովել այրման ռեժիմը և անհրաժեշտ ջերմաստիճանը ինչպես հիմնական, այնպես էլ երկրորդային խցում,
- պարբերաբար իրականացնել սարքի պրոֆիլակտիկ ստուգում և թեստավորում
- սարքի սպասարկումը և շահագործումն իրականացնել միայն հատուկ պատրաստված անձնակազմի կողմից,
- իրականացնել օդային ավազանի մոնիթորինգ՝ ազոտի և ծծմբի օքսիդների արտանետումները կանխելու նպատակով:

8.4. Ջրային ռեսուրսներ

- թափոնների պահեստավորումն իրականացնել այնպես, որպեսզի բացառվի դրանց շփումը անձրևաջրերի հետ,
- վնասազերծման սարքի մաքրումն իրականացնել չոր եղանակով, առանց ջրի օգտագործման:

8.5. Հողային ռեսուրսներ

- կլինիկական թափոնների ժամանակավոր պահման համար կազմակերպությունում առանձնացնել հատուկ տարածք՝ փակ շինության մեջ,
- տեղադրել սառնարանային հանգույց, թափոնների 2 օրից ավելի պահման դեպքերի համար:

8.6. Կենսաբազմազանություն

Ինչպես ներկայացվել է 5. 4. բաժնում, նախատեսվող գործունեությունը չի ունենա անմիջական ազդեցությունը կենսաբազմազանության վրա: Սակայն հաշվի առնելով հարևանությամբ ազգային պարկի առկայությունը և տարածաշրջանի էկոհամակարգերի խոցելիությունը, նախատեսված են հետևյալ մեղմող միջոցառումները.

- բացառել թափոնների ընդունումը, թեկուզ ժամանակավոր պահեստավորումը շինությունից դուրս,
- զգուշացնել մատակարարներին այն մասին, որ տրանսպորտային միջոցները պետք է երթևեկեն միայն ցերեկային ժամերին և ասֆալտապատ ճանապարհներով,
- զգուշացնել մատակարարներին այն մասին, որ տրանսպորտային միջոցները շահագործվեն սարքին վիճակում, բացառելու համար աղմուկի գերնորմատիվային մակարդակը,

- բացառել թափոնների գերնորմատիվային քանակների ընդունումը և այրումը։
- Կանաչապատել տարածքի ազատ մասը՝ 448 մ^2 մակերեսով /տես գլխավոր հատակագիծը/։ Կանաչ տարածքում նախատեսվում է խոտածածկ և 22 ծառ՝ Սևանի ֆլորիստիկ շրջանին բնորոշ ծառատեսակներ։

8.7. Սոցիալական ազդեցության մեղմման միջոցառումներ

Կայանքը շահագործող ընկերությունը նախատեսում է մասնակցել համայնքի սոցիալական խնդիրների քննարկմանը և հնարավորությունների շրջանակներում համաֆինանսավորել որոշ միջոցառումներ։

Բացի այդ, նախատեսվում է անձնակազմը հիմնականում հավաքագվել համայնքի բնակչությունից։

9. Շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունների և միջոցառումների ծրագիրը արտակարգ և վթարային իրավիճակների դեպքում։

Կայանքի շահագործման ժամանակ հնարավոր են վթարային իրավիճակներ, ինչպես նաև բնական աղետներ և անբարենպաստ օդերևութային պայմաններ: Բոլոր հնարավոր դեպքերում շրջակա միջավայրի լրացուցիչ աղտոտումը կանխելու կամ հնարավոր չափով նվազեցնելու համար Վարդաձորի կլինիկական թափոնների վնասազերծման կայանքում մշակված է գործողությունների ծրագիր, որը ներառում է հետևյալ միջոցառումները.

- բնական աղետների ժամանակ (երկրաշարժ, սողանքներ, ջրհեղեղ և այլն) կլինիկական թափոնների այրման կայանքի շահագործումը դադարեցվում է և անձնակազմը տեղափոխվում է անվտանգ վայր:
- Հրդեհի ժամանակ հոսանքազրկվում են բոլոր էլեկտրական սարքերը, միացվում է հակահրդեհային ջրի համակարգը, անձնակազմը տեղափոխվում է անվտանգ վայր:

Անբարենպաստ օդերևույթաբանական պայմանների (քամու արագության նվազեցում, անհողմություն, մառախուղ) մասին հաղորդագրություն ստանալուց հետո կատարվում են հետևյալ գործողությունները (միջոցառումները).

- I կարգի վտանգի (զգուշացման) ժամանակ խստացվում է կայանքի արտադրական գործընթացների հսկողությունը,
- II կարգի վտանգի ժամանակ սահմանափակվում է ջերմային վնասազերծման արտադրողականությունը,
- III կարգի վտանգի ժամանակ դադարեցվում է ջերմային վնասազերծման գործընթացը:

Անբարենպաստ օդերևույթաբանական պայմանների միջոցառումները իրականացվում են անմիջապես կայանքի անվտանգության պատասխանատուի կամ նրան փոխարինող անձի կողմից:

10. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԾՐԱԳԻՐ

Նախատեսվող գործունեության հիմնական բնապահպանական ազդեցությունը պայմանավորված է կլինիկական թափոնների վնասակար հատկություններով, ինչպես նաև այրման ընթացքում առաջացող վնասակար նյութերի ազդեցությամբ:

Ինչպես նախորդ բաժիններում նշվել է, հիմնական նյութերն են ազոտի և ծծմբի երկօքսիդները, կախված մասնիկները ու ածխածնի օքսիդը:

Օդում նշված նյութերի պարունակությունը վերահսկելու համար նախատեսված է իրականացնել մոնիթորինգ (մշտադիտարկում):

Այդ նպատակով նախատեսվում է պայմանագիր կնքել մասնագիտացված բնապահպանական կազմակերպության հետ, որը կայանքի տարածքում կկատարի նմուշառում և կորոշի ազոտի ու ծծմբի երկօքսիդի, ածխածնի օքսիդի և կախված մասնիկների պարունակությունը:

Սակայն մոնիթորինգի հիմնական միջոցառումը՝ այրման ընթացքում մոխրի քիմիական բաղադրության ստուգումն է, որը հնարավորություն կտա գնահատել կայանքի աշխատանքի համապատասխանությունը տեխնիկական պահանջներին: Նախատեսվում է պարբերաբար կատարել մոխրի նմուշառում և այն ներկայացնել սերտիֆիկացված լաբորատորիա քիմիական կազմը որոշելու համար:

Թեև տարածքում չեն հայտնաբերվել բնապահպանական տեսակետից արժեքավոր բուսական և կենդանական տեսակներ (մանրամասները ներկայացված են 3.6, 3.7 և 6.4 բաժիններում), այնուամենայնիվ տարեկան 1 անգամյա մոնիթորինգ նախատեսվում է նաև կենսաբազմազանության մոնիթորինգային խմբի կողմից:

Մոնիթորինգի մյուս միջոցառումների պարբերականությունը կլինի եռամսյակային, չափումների արդյունքները կգրանցվեն մոնիթորինգի մատյաններում և կտրամադրվեն վերահսկող մարմիններին:

Նախատեսվող բոլոր միջոցառումների հիմնական նպատակն է մոնիտորինգի արդյունքներով ըստ անհրաժեշտության նախաձեռնել Սևանի ջրհավաք ավազանի աղտոտման, կանխարգելման, բացառմանն ուղղված միջոցառումներ:

Մոնիթորինգի տարեկան ծախսերը նախատեսվում են 320.0 հազար դրամ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. СН 245 – 71. Санитарные нормы проектирования промышленных предприятий
2. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
3. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ: EMEP/EEA
4. “Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ” հաստատված ՀՀ Կառավարության 2005թ. հունվարի 25-ի N 91 – Ն Որոշմամբ
5. Долгосрочное прогнозирование уровня и возможных отрицательных последствий загрязнения атмосферы, Обнинск 1984г.
6. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами. Госкомгидромет, Ленинград, 1986
7. Пособие по составлению раздела проекта “Охрана окружающей природной среды ” к СНиП 1.02.01-85. Госстрой СССР, ЦНИИПРОЕКТ, Москва, 1989г.
8. РД 52.04.186-89. Руководство по контролю загрязнения атмосферы. ГК СССР по гидрометеорологии
9. Հայաստանի Ազգային Ատլաս: Երևան, 2007

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Նախատեսվող գործունեությունը ըստ փուլերի	*Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները*	*Առաջարկվող մեղմացնող միջոցառումները*	*Միջոցառման պատասխանատու*	*Արտաքին վերահսկողություն*
Կլինիկական և կենցաղային թափոնների պահեստավորում Այրման կայանքի շահագործում Կայանքի շահագործում Թափոնների պահեստավորում, ախտահանում, այրում	Շրջակա տարածքների աղտոտում և աղբոտում Ջրային ռեսուրսներ Հողածածկի և մոտակա մակերևութային հոսքերի պահպանություն Մթնոլորտային օդի աղտոտում Կենսաբազմազա-նության պահպանություն Սևանի ջրհավաք ավազանի աղտոտման, կանխարգելման, բացառմանն ուղղված միջոցառումներ Աշխատանքի անվտանգություն,	- Կլինիկական թափոնները պահեստավորել հատուկ նախատեսված սենյակում, որտեղ մուտք կունենան միայն հատուկ հրահանգավորված աշխատակիցներ: - Երկարատև պահպանման համար նախատեսված է սառնարանային հանգույց: - Կենցաղային աղբի համար բժշկական կենտրոնի ամբողջ տարածքում տեղադրված են աղբամաններ: - Կանոնավոր աղբահանում: - Վառարանի մաքրումը կատարել չոր եղանակով: - Բացառել կլինիկական թափոնների ներթափանցումը արտաքին տարածքներ, որի հետևանքով կարող են անձրևաջրերի հետ տարածվել շրջակա միջավայրում: - Ապահովել վառարանի հիմնական և լրայրման խցերի ջերմաստիճանային ռեժիմի պահպանում: - Թույլ չտալ թափոնների կուտակում կայանքի մասնաշենքում: - Կազմակերպել կայանքի տարածքի և մերձակայքի մոնիթորինգ : - Բացառել թափոնների ընդունումը, թեկուզ ժամանակավոր պահեստավորումը շինությունից դուրս: - Զգուշացնել մատակարարներին այն մասին, որ տրանսպորտային միջոցները պետք է երթևեկեն միայն ցերեկային ժամերին և ասֆալտապատ ճանապարհներով: - Զգուշացնել մատակարարներին այն մասին, որ տրանսպորտային միջոցները	Կայանքը շահագործող անձնակազմ Սերտիֆիկացված լաբորատորիա	Մարտունու համայնքապետարան Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին

Նախատեսվող գործունեությունը ըստ փուլերի	*Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները*	*Առաջարկվող մեղմացնող միջոցառումները*	*Միջոցառման պատասխանատու*	*Արտաքին վերահսկողություն*
	աշխատանքային պայմաններ	շահագործվեն սարքին վիճակում, բացառելու համար աղմուկի գերնորմատիվային մակարդակը: - Բացառել թափոնների գերնորմա-տիվային քանակների ընդունումը և այրումը: - Կանաչապատել տարածքի 448 մ^2 մասը, նախատեսված է խոտածածկ և 22 հատ տեղի բնակլիմայական պայմանների բնորոշ ծառատեսակ - Աշխատակազմը պետք է ունենա խմելու ջրի և զուգարանների հասանելիություն, սնունդ ընդունելու և հանգստանալու համար անհրաժեշտ պայմաններ: - Այրման կայանքի աշխատակազմը պետք է ապահովվի արտահագուստով և անձնական անվտանգության համար անհրաժեշտ միջոցներով: - Անվտանգության սարքավորումների օգտագործումը պետք է ուսուցանվի, վերահսկվի և պարտադրվի: Աշխատանքի անվտանգության պահպանման համակարգը պետք է նախատեսի վերահսկողություն, հրահանգավորում, ուսուցում և գիտելիքների ստուգում:		
Կայանքի շինարարության փուլ	Կանաչ տարածքների հիմնում	- Կանաչապատել տարածքի ազատ մասը՝ 448 մ^2 մակերեսով /տես գլխավոր հատակագիծը/: Կանաչ տարածքում նախատեսվում է խոտածածկ և 22 ծառ՝ Սևանի ֆլորիստիկ շրջանին բնորոշ ծառատեսակներ:բացառել թափոնների ընդունումը, թեկուզ ժամանակավոր պահեստավորումը շինությունից դուրս, - զգուշացնել մատակարարներին այն մասին, որ տրանսպորտային միջոցները	Շինարարության կապալառու	Գործունեության հիմնադիր Համայնքապետարան

Նախատեսվող գործունեությունը ըստ փուլերի	*Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները*	*Առաջարկվող մեղմացնող միջոցառումները*	*Միջոցառման պատասխանատու*	*Արտաքին վերահսկողություն*
Կայանքի շահագործման փուլ	Կենդանական և բուսական աշխարհի պահպանություն	պետք է երթևեկեն միայն ցերեկային ժամերին և ասֆալտապատ ճանապարհներով, - զգուշացնել մատակարարներին այն մասին, որ տրանսպորտային միջոցները շահագործվեն սարքին վիճակում, բացառելու համար աղմուկի գերնորմատիվային մակարդակը, - բացառել թափոնների գերնորմատիվային քանակների ընդունումը և այրումը։ - Կանաչապատել տարածքի ազատ մասը՝ 448 մ^2 մակերեսով /տես գլխավոր հատակագիծը/։ Կանաչ տարածքում նախատեսվում է խոտածածկ և 22 ծառ՝ Սևանի ֆլորիստիկ շրջանին բնորոշ ծառատեսակներ։	Կայանքը շահագործող ընկերություն	Գործունեության հիմնադիր Համայնքապետարան

Վառարանը, սառնարանային հանգույցը և ախտահանման սարքավորումը գնվելու են կապիտալ ներդրումների հաշվին: Մնացած բնապահպանական միջոցառումների տարեկան գումարը, ներառյալ՝ մոնիթորինգը, կկազմի 740.0 հազար դրամ:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Սույն ՇՄԱԳ հաշվետվությանը հավելվածների տեսքով կցված են հետևյալ նյութերն ու փաստաթղթերը.

1. **Հավելված 1.** Տեխնիկական առաջադրանք
2. **Հավելված 2.** 2-րդ և 3-րդ հանրային քննարկումների հայտարարություններ, մասնակիցների գրանցաթերթեր և արձանագրություններ
3. **Հավելված 3.** Պետական տուրքի վճարման անդորրագիր
4. **Հավելված 4.** Հողամասի սեփականության իրավունքի վկայական
5. **Հավելված 5.** Պետական ռեգիստրի գրանցման վկայական (Պետական միասնական գրանցամատյանից քաղվածք)
6. **Հավելված 6.** Գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկի արդյունքները

Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք

Հավելված N2
ՀՀ բնապահպանության նախարարի
2014թ. նոյեմբերի << 18 >>-ի
N 347-Ն հրամանի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ
/նախատեսվող գործունեության/

ՏԱ 25

<<21>> 04 2022թ.

Սույն առաջադրանքը կազմված է <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) դրույթների համաձայն և հիմք է հանդիսանում նախատեսվող Ա կամ Բ կատեգորիայի գործունեության՝ փորձաքննության հիմնական փուլին ներկայացվող շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական գնահատման հաշվետվության մշակման համար՝ ըստ ստորև ներկայացվող պահանջների.

1. Ձեռնարկողի անվանումը և հասցեն՝	Ա/Ձ Սերգե Ժիրայրի Հակոբյան Գեղարքունիքի մարզ, գ. Ձորագյուղ 8-րդ փող. 38տ.
2. Նախատեսվող գործունեությունը և նրա կատեգորիան՝	Փորձաքննության ենթակա Գեղարքունիքի մարզի Վարդաձոր համայնքի վարչական տարածքում բժշկական թափոնների այրման կայանքի գործունեությունը համաձայն Օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 6-րդ կետի ա) ենթակետի դասակարգվում է Ա կատեգորիայի:
3. Ազդակիր համայնքը (ները)	Գեղարքունիքի մարզի Վարդաձոր համայնք:
4. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացում դիտարկվող օբյեկտները և բնութագրերը նախատեսել համաձայն Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 13-րդ կետերի	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման իրականացման գործընթացում դիտարկել Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 13-րդ կետերը: Դիտարկել նաև շրջակա միջավայրի օբյեկտների (հող, օդ, ջուր) աղտոտվածության մակարդակը (ֆոնային տվյալներ), կենսաբազմազանության առկա վիճակի նկարագիրը:
5. Շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության գնահատման հաշվետվության բովանդակությունը և դրան կից ներկայացվող փաստաթղթերը	Նախատեսվող գործունեության՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության բովանդակությունը և հաշվետվությանը կից փորձաքննության ներկայացվող փաստաթղթերը պետք է համապատասխանեն Օրենքի 18-րդ հոդվածի

նախատեսել համաձայն Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ից 15-րդ և 3-րդ մասի 2-ից 6-րդ կետերի	2-րդ մասի 1-ից 15-րդ և 3-րդ մասի 2-ից 6-րդ կետերին: Նախատեսվող գործունեության՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության բովանդակությունը և հաշվետվությանը կից փորձաքննության ներկայացվող փաստաթղթերը պետք է համապատասխանեն սույն Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ից 15-րդ և 3-րդ մասի 2-ից 6-րդ կետերին: Ներառել նաև հետևյալ տեղեկատվությունը՝ համապատասխան հիմնավորումներով. -Նախատեսվող նախագծային լուծումների հնարավոր այլընտրանքային տարբերակները, ներառյալ գործունեությունից հրաժարման (զրոյական), ընտրված տարբերակի հիմնավորումը: -Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի հնարավոր տնտեսական վնասի գնահատումները (շահագործման, փակման փուլեր) 27.05.2015թ. N 764-Ն ՀՀ կառավարության որոշման համաձայն: -Նախատեսվող գործունեության և հարակից տարածքում այլ գործունեությունների հետևանքների համալիր վերլուծությունը, իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր գումարային և ամբողջական ազդեցությունների գնահատումը: - Անհրաժեշտ է նախատեսվող գործունեության և նրա հարակից տարածքներում իրականացնել լրացուցիչ դաշտային ուսումնասիրություններ՝ Կարմիր գրքում գրանցված կենդանական և բուսական աշխարհի վերաբերյալ՝ համապատասխան հիմնավորումներով (մասնագիտական եզրակացություն, գրականություն և այլն, առաջնորդվելով՝ ՀՀ կառավարության 29.01.2010թ. <<ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին>> N 71-Ն և N 72-Ն և 31.07.2014թ. N 781-Ն որոշումների պահանջներով): - Կենդանական և բուսական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունները (մասնավորապես պոպուլյացիաների փոփոխության, կենդանիների ձվադրման և բնադրման, կենդանիների ապրելավայրերի կորստի), դրանց ուղղված նախատեսվող միջոցառումները և մշտադիտարկումը:

- Բնակավայրերից և անտառային տարածքներից հեռավորության, առկա ճանապարհների, մերձատար ուղիների, օժանդակ շինությունների տեղադիրքերի վերաբերյալ, ներկայացնել նաև սխեմատիկ և քարտեզագրական նյութեր՝ համապատասխան կոորդինատներով:
- ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համապատասխան նախնական համաձայնությունները, թույլտվությունները (ջրամատակարարում և ջրահեռացում, էներգամատակարարում, աղբահեռացում):
- Նախատեսել Սևանի ջրհավաք ավազանի աղտոտման, կանխարգելման, բացառմանն ուղղված միջոցառումներ:
- Ներառել նախատեսվող գործունեության համար կառուցվող արտադրական մասնաշենքի վերաբերյալ տեղեկատվությունը, շինարարության ընթացքում հանվող և պահեստավորվող բերրի հողի, կուտակման տեղի, զբաղեցնող մակերեսի և ծավալների, հողաբուսական շերտի պահպանման, հողի որակական փոփոխությունների, դեգրագացիայի, վտանգվող և պահեստավորվող բուսահողի պահպանության, հողերի հավանական աղտոտվածության նվազեցմանն ուղղված միջոցառումների և մոնիթորինգի վերաբերյալ տեղեկատվությունը՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 08.11.2011թ. N1396 որոշման պահանջներով:
- Նախատեսվող արտադրամասի շինարարության փուլում լանդշաֆտի խախտման, ջրային գոտիների, ջրահոսքերի, թափոնների հավաքման, կուտակման, պահեստավորման, նոր կանաչ գոտիների ստեղծման (տեսակի) վերաբերյալ տեղեկատվությունը:
- Նախատեսվող բոլոր միջոցառումները ներառել միջոցառումների ծրագրում, ներկայացնել դրանց իրականացման ժամանակացույցը, միջոցառումներին ուղղված ծախսերի (արդի շուկայական արժեքներին համապատասխան) գումարային գնահատումները (նաև աղյուսակային տեսքով):
- Ներառել նաև ջրային ռեսուրսների աղբյուրները, որոնք անհրաժեշտ են լինելու աշխատող անձնակազմի խմելու, կենցաղային կարիքների և տեխնիկական նպատակների համար (ջրցան, շինարարության համար

բետոնախառնուրդի ստացում):

- Ներառել տեղեկատվություն արտակարգ իրավիճակների առաջացման ռիսկը հնարավորին չափով նվազեցնելու գործողությունների ծրագրի վերաբերյալ, որն իր մեջ կներառի անբարենպաստ օդերևութաբանական պայմաններում իրականացվող միջոցառումները և հրդեհային անվտանգությունը:
- Հաշվետվությունում անհրաժեշտ է ներառել նաև հետևյալ տեղեկատվությունը՝ համապատասխան հիմնավորումներով.
- ոչնչացման ենթակա բժշկական թափոնների բնութագիրը. մասնավորապես, թափոնների ագրեգատային վիճակը և ֆիզիկական ձևը, տեղափոխման ձևը եղանակը, ում կողմից է կատարվում տեղափոխումը,
- բժշկական թափոնների վնասազերծման համար տեղադրվող վառարանի տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, սարքավորման տեխնիկական անձնագիրը,
- բժշկական թափոններում առկա մետաղական մասերի և փաթեթավորված պոլիէթիլենային տոպրակների հետագա լուծումները,
- ծխատար խողովակի/ների քանակը, բարձրությունը, ծխաբեր գազերի մաքրման համակարգը (արտանետվող գազային նյութեր, մասնիկներ, հոտեր և այլն), ծխատար խողովակի բարձրության համապատասխանությունը սահմանված չափորոշիչներին, ծխագազերի և արտանետումների ցրման հաշվարկների հիմնավորումը,
- այրման ջերմաստիճանի տիրույթը, որը կապահովի թափոնների լիարժեք այրումը,
- այրման ընթացքում վառարանի աշխատանքի ընթացքում հովացման նպատակով օգտագործվող ջրի քանակ, աղբյուր,
- գործունեության ընթացքում օգտագործվող ֆիլտրերի տեխնիկական բնութագրերը՝ ֆիլտրերի փոխման հաճախականությունը, աղտոտված ֆիլտրերի լուծումները,
- արտանետվող ծխագազերում վնասակար նյութերի ընդհանուր քանակը, ֆիզիկաքիմիական կազմը, ՍԹԿ-ին համապատասխանությունը: Ներկայացնել հաշվարկներ՝ վնասակար քիմիական նյութերի /դիօքսիններ, ֆուրաններ/, առաջացման վերաբերյալ, ինչպես նաև ֆիլտրումից հետո

արտանետվող գազերի ֆիզիկաքիմիական բաղադրությունը,
- թափոնների վնասազերծման արդյունքում առաջացած մոխրի տեսքով թափոնի կազմը, բաղադրությունը, տեղափոխման եղանակը և վայրը,
- վառարանից մոխրի հեռացաման ձևը եղանակը, մոխրի տարաների բունթագիրը, տարաների ժամկետայնությունը, մաքրման արդյունքում առաջացած երկրորդային աղտոտիչների մաքրման տեխնոլոգիաները,
- բերվող այրման ենթակա բժշկական թափոնների տեսակավորման բնութագիրը /պիտակավորում՝ տեղեկատվություն թափոնի տեսակի, որակի վերաբերյալ/,
- այրման ենթակա թափոնի բեռնման ձևը, եղանակը, հաճախականությունը,
- ընդունվող թափոնների տեղափոխման եղանակները, պահման պայմանները /սառնարան, պահեստ, կոնտեյներ/,
- ազդեցությունների հետ կապված առողջապահական գործոնների վերլուծությունը, մասնավորապես կազմակերպության աշխատատեղերում և մոտակա բնակավայրում աղմուկի ու թրթռման մակարդակներ հաշվարկները: Ներկայացնել տեղեկատվություն առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջների վերաբերյալ:
- Նախատեսվող գործունեության շահագործման փուլերում հսկողության, ինչպես նաև մշտադիտարկման (մոնիթորինգի) և հետնախագծային վերլուծության ծրագրերի լիարժեքության ապահովման վերաբերյալ:
- Անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումների ցրման համակարգչային հաշվարկն իրականացնել շրջակա միջավայրի նախարարի 2020թ. փետրվարի 18-ի թիվ 64-Լ հրամանով սահմանված համակարգչային ծրագրերից մեկով, հաշվի առնելով ֆոնային աղտոտվածության տվյալները, հաշվարկների համար հիմք ընդունել «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված վտանգավոր քամու արագության և այլ ցուցանիշը:

6. Համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի եզրակացության կամ կարծիքի վերաբերյալ պահանջը՝	- Նախատեսվող գործունեությունն իարկանացնել Առողջապահության նախարարի 2009թ. հոկտեմբերի 29-ի N20-Ն հրամանի պահանջներին համապատասխան: «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Արտադրական վտանգավոր օբյեկտների նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության փորձաքննության» եզրակացությունը:
7. Գործընթացի մասնակիցները համաձայն Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի	Առողջապահության, արտակարգ իրավիճակների, շրջակա միջավայրի նախարարություններ, Վարդաձոր համայնք, շահագրգիռ հանրություն:
8. Հանրության ծանուցումը և քննարկումների իրականացումը կատարել համաձայն Օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ կետերի, 3-րդ մասի, 5-րդ մասի 1-ին, 2-րդ կետերի, 7-րդ և 8-րդ մասերի և «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» կառավարության 19.11.2014թ N1325-Ն որոշման	Գնահատման հիմնական փուլում իրականացնել հանրային ծանուցում և քննարկում՝ ազդակիր համայնքի, շահագրգիռ հանրության մասնակցությամբ: Հանրային քննարկումների արձանագրությունը և տեսաձայնագրությունը կցել ՇՄԱԳ հաշվետվությանը:
9. Պետական տուրքի չափը՝	Ա կատեգորիայի գնահատման հաշվետվության փորձաքննության իրականացման համար՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:
10. Ստացողը և հաշվի համարը՝	Ֆինանսների նախարարության գանձապետական բաժանմունք՝ 900005000196:
11. Վճարման նպատակը՝	Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության գործընթացի իրականացման համար:
12. Փորձաքննության հիմնական փուլի սկիզբը համաձայն Օրենքի 19-րդ հոդվածի և <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացման կարգը սահմանելու մասին>> ՀՀ կառավարության որոշման	Նախատեսվող գործունեության փորձաքննության հիմնական փուլը սկսվում է տեխնիկական առաջադրանքին համապատասխան կազմված հաշվետվությունը կից փաստաթղթերով՝ էլեկտրոնային և տպագիր տարբերակները, տուրքի անդորրագիրը, հանրային քննարկումների

արձանագրությունը, տեսաձայնագրությունը՝ կից մասնակիցների ցանկով, ձեռնարկողի կողմից լիազոր մարմնին ներկայացնելու պահից:

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ Հ. Մարտիրոսյան

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի փոխտնօրեն

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի մասնագետ Ա. Վարդանյան

Հավելված 2. 2-րդ և 3-րդ հանրային քննարկումների հայտարարություններ, մասնակիցների գրանցաթերթեր և արձանագրություններ

Հայաստանի Հանրապետություն

24.03.2022
ՀԻՆԳՇԱԲԹԻ
թիվ 52 (7718)

«HAYASTANI HANRAPETUTIUN» ARMENIAN DAILY www.hhpress.am E-mail: hh@hhpress.am

Լույս է տեսնում 1990թ. հոկտեմբերի 9-ից

ՀԱՐՑՈՒՊԱՏԱՍԽԱՆ 2

ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎ 3

ԻՆՔՆԱՃԱՆԱՉՈՒՄ 8

Հերթական անհաջող սադրանքը

Տարածաշրջանում խաղաղության հաստատման գործընթացը երկարաձգելու փորձերը ձախողման են դատապարտված

ԳՈՎԱԶԴ, ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 010 52-69-74 hhgovazd@mail.ru

ՁԱՅՆԱՁԱՅՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 2022 թ-ի ապրիլի 6-ին ժամը 14:00-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդաձորի համայնքապետարանում (Հասցե՝ գ. Վարդաձոր, համայնքապետարանի շենք, Փոստային ինդեքս 1417) տեղի կունենան Վարդաձոր համայնքում նախատեսվող բժշկական թափոնների այրման կայանքի նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի նախագծի վերաբերյալ հանրային ծանուցում և քննարկումներ (2-րդ փուլի հանրային ծանուցում և քննարկումներ): Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում (env.am) կամ նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ում, հասցե՝ ք. Երևան, Փ. Բուզանդի 1/3: Հեռ.՝+374-11-22-02-17:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի/21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 2022թ. ապրիլի 5-ին ժամը 12:00-ին ՀՀ Արարատի մարզի Արտաշատ

Հայաստանի Հանրապետություն

4.06.2022
ՇԱԲԱԹ
թիվ 103 (7769)

«HAYASTANI HANRAPETUTIUN» ARMENIAN DAILY www.hhpress.am E-mail: hh@hhpress.am

Լույս է տեսնում 1990թ. հոկտեմբերի 9-ից

ՁԵՌԱԳԻՐ 2

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ 4

ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 5

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 2022թ-ի հունիսի 17-ին ժամը 14:00-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդաձորի համայնքապետարանում (Հասցե՝ գ. Վարդաձոր, համայնքապետարանի շենք, Փոստային ինդեքս 1417) տեղի կունենան Վարդաձոր համայնքում նախատեսվող բժշկական թափոնների այրման կայանքի նախագծի և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային ծանուցում և քննարկումներ (3-րդ փուլի հանրային ծանուցում և քննարկումներ): Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ «Սերգեյ Հակոբյան Ժիրայրի» Ա/Ձ-ի գործունեության իրականացման հասցեում՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Ձորագյուղ, 1412, 8-րդ փ., 38 տ, ինչպես նաև Վարդաձորի համայնքապետարանում:

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով (առաջին փուլ) 2022թ հունիսի 16-ին, ժամը 12:30-ին Մասիս խոշորացված համայնքի Մարմարաշեն վարչական շրջանի դե-

26/3 V.Sargsyan Street, 0010 Yerevan, Republic of Armenia, Tel/Fax: + 374 (10) 541-175, www.progress-audit.am

PROGRESS AUDIT — AUDIT & CONSULTING

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր վերապահումով կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, բացի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Ընկերությունը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

26/3 V.Sargsyan Street, 0010 Yerevan, Republic of Armenia, Tel/Fax: + 374 (10) 541-175, www.progress-audit.am

PROGRESS AUDIT — AUDIT & CONSULTING

Մասնակիցների ցանկ

2022թ-ի ապրիլի 06-ին ժամը 14:00-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդաձորի համայնքապետարանում կայացած Վարդաձոր համայնքում նախատեսվող բժշկական թափոնների այրման կայանքի նախագծի վերաբերյալ հանրային ծանուցման և քննարկումների
(2-րդ փուլի հանրային ծանուցում և քննարկումներ)

N	Անուն, ազգանուն	Կազմակերպություն/պաշտոն	Հեռախոսահամար	Ստորագրություն
1.			091223690	
2.		— 11 —	091586635	
3.			093-24-72-93	
4.			094979966	
5.			094538596	
6.			077530431	
7.			094572779	
8.			093818776	
9.			094894544	
10.			093032408	
11.			091715 83	
12.			093351110	
13.			091430412	
14.			093334232	
15. 17.			093 100 665	
16.			093427005	
17.			098084465	
18.			055710327	
19.			098141434	
20.			094439227	

Մասնակիցների ցանկ

2022թ-ի հունիսի 17-ին ժամը 14:00-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդածորի համայնքապետարանում կայացած Վարդածոր համայնքում նախատեսվող բժշկական թափոնների այրման կայանքի նախագծի և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային ծանուցման և քննարկումների

(3-րդ փուլի հանրային ծանուցում և քննարկումներ)

N	Անուն, ազգանուն	Կազմակերպություն/պաշտոն	Հեռախոսահամար	Ստորագրություն
1.	[illegible]	[illegible]	091223690	[illegible]
2.	[illegible]	— « —	091586[illegible]	[illegible]
3.	[illegible]	[illegible]	091430412	[illegible]
4.	[illegible]	[illegible]	093-419039	[illegible]
5.	[illegible]	[illegible]	093.85.67.91	[illegible]
6.	[illegible]	[illegible]	094 281601	[illegible]
7.	[illegible]	[illegible]	093.05[illegible]	[illegible]
8.	[illegible]	[illegible]	098330230	[illegible]
9.	[illegible]	[illegible]	093748058	[illegible]
10.	[illegible]	[illegible]	094540784	[illegible]
11.	[illegible]	[illegible]	091430412	[illegible]
12.				
13.				
14.				
15.				
16.				
17.				
18.				
19.				
20.				

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Վարդաձոր համայնքում նախատեսվող բժշկական թափոնների այրման կայանքի» նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 2-րդ հանրային քննարկումների

2022թ-ի ապրիլի 06-ին, ժամը 14:00-ին Գեղարքունիքի մարզի Վարդաձորի համայնքապետարանում (հասցե՝ գ. Վարդաձոր, համայնքապետարանի շենք, փոստային ինդեքս 1417) տեղի ունեցան Վարդաձոր համայնքում նախատեսվող բժշկական թափոնների այրման կայանքի նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 2-րդ հանրային քննարկումները՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն: Հանրային քննարկումների հայտարարությունը հրապարակված է եղել «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2022 թ-ի մարտի 24-ի թիվ 52 (7718) համարում:

Հանդիպմանը մասնակցում էին Վարդաձորի համայնքապետարանի, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի, նախատեսվող գործունեության ձեռնարկողի՝ Ա/Ձ Ս. Հակոբյանի, նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի մշակման և հանրային քննարկումների կազմակերպման պատասխանատու ընկերության (Ի ՍԻ Ի Քաուքազուս ՍՊԸ) ներկայացուցիչները, ինչպես նաև համայնքի բնակիչները:

Վարդաձորի համայնքապետարանի ներկայացուցիչ **Մ. Ավետիսյանը** ողջունեց ներկաներին և ներկայացրեց հանդիպման նպատակը: Այնուհետև Մ. Ավետիսյանը խոսքը փոխանցեց ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ Ա. Վարդանյանին:

Ա. Վարդանյանը ողջունեց բոլորին և ներկայացրեց, որ նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջների դասվում է Ա կատեգորիայի և ենթակա է 4 հանրային քննարկումների: Նման նախագծի համար պահանջվում է նախնական և հիմնական գնահատման փորձաքննական փուլեր: Այժմ իրականացվում են փորձաքննական նախնական փուլի աշխատանքները և տարբեր գերատեսչական մարմիններ տրամադրել են իրենց կարծիքները, որի հիման վրա հայտը լրամշակվել է: Նախնական փուլի ավարտից հետո տրամադրվելու է տեխնիկական առաջադրանք, որի հիման վրա կմշակվի ՇՄԱԳ հաշվետվություն, որի մեջ մանրամասն կներկայացվեն բոլոր տեխնոլոգիական լուծումներն ու հաշվարկները: Նշվեց նաև, որ համայնքը և հանրությունը պատշաճ ծանուցվել են: Այնուհետև խոսքը փոխանցվեց հանրային լսումների կազմակերպման պատասխանատու ընկերության (Ի ՍԻ Ի Քաուքազուս ՍՊԸ) ներկայացուցիչ՝ Վ. Թևոսյանին:

Վ. Թևոսյանը ողջունեց մասնակիցներին, ներկայացավ և հայտնեց, որ հանդիպման նպատակն է Վարդաձոր համայնքում նախատեսվող բժշկական, կլինիկական թափոնների վնասազերծման, այրման կայանքի ստեղծման նախագծի նախնական գնահատման հայտի քննարկումը: Նշվեց, որ կլինիկական թափոնների վնասազերծման խնդիրը վերջերս դարձել է հրատապ, առողջապահության ոլորտի զարգացման հետ մեկտեղ աճում է նաև թափոնների քանակը: Թափոնները արգելված է տեղափոխել աղբավայրեր և ժամանակին նման թափոնների նկատմամբ մոտեցումը դրանց թաղելն էր համապատասխան տեղում, սակայն ժամանակի ընթացքում այդ մոտեցումը փոխվել է, քանի որ թափոնները աղտոտում էին շրջակա միջավայրը – հողը, ջուրը, և այժմյան մոտեցումն է նման թափոնների վնասազերծումը: Նա նշեց, որ վնասազերծումը լինում է մի քանի տեսակի. 1) քիմիական, որի բացասական կողմերից է, որ թափոնների վիրուսոլոգիական մասը դժվար է վերացնել և 2) այրում, որն այսօրվա դրությամբ թափոնների վնասազերծման լավագույն եղանակն է: Այժմ ձեռնարկողը որոշել է Վարդաձոր համայնքում հիմնել թափոնների այրման կայանք: Ժամանակակից այրման կայանքները հասնում են այնպիսի ցուցանիշների, որ իրենց արտանետումները հասցված են նվազագույնի և գրեթե չեն ազդում աղտոտվածության առկա մակարդակի վրա: Դրա համար վառարանները պետք է ունենան 2 մաս. 1-ին մաս - հնոց, որտեղ կատարվում է այրումը 600-1000 աստիճանի պայմաններում և 2-րդ մաս, որտեղ ջերմաստիճանը պետք է հասնի առնվազն 1100 աստիճանի, որպեսզի գրեթե ամբողջովին չեզոքացնի 1-ին խցում այրումից մնացած արտանետումները: Նախատեսվում է այրել միայն օրգանական ծագման նյութերը, ինչպիսիք են օրինակ ձեռնոցները, սավաններ, վիրահատություններից մնացած կապոցները և նման աղտոտված լաթեր, դեղամիջոցները չեն այրվում, դրանք հավաքվում են և հանձնվում են դրա համար նախատեսված հատուկ կազմակերպություններին: Հայաստանում թափոնների վնասազերծումը կարգավորվում է առողջապահության նախարարի հրամանով՝ «Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ եվ հակահամաճարակային պահանջներ»: Հիմնվելով նշված հրամանի, ինչպես նաև եվրոպական դիրեկտիվների պահանջների վար Ա/Ձ Սերգե Հակոբյանը բանակցություններ է վարել այրման կայանքներ արտադրող տարբեր մատակարարների հետ, որպեսզի ընտրի շրջակա միջավայրի վրա չնչին ազդեցություն թողնող ամենարդյունավետ վառարանը: Նա ներկայացրեց նաև որոշ տեխնիկական մանրամասներ, կապված այրման գործընթացի հետ, նշելով որ հաջորդ քննարկումներին կներկայացվեն ավելի մանրամասն հաշվարկներ, կապված այրումից առաջացած արտանետումների ցուցանիշների հետ:

Լրացում՝ Վ. Թևոսյան – ևս մեկ անգամ շեշտվեց, որ սույն հանդիպումը կազմակերպված է օրենքի պահանջով և նպատակն է հանրության իրազեկումը նախատեսվող գործունեության մասին: Համայնքի բնակիչները ունեն ժամանակ ծանոթանալ նախատեսվող գործունեության վերաբերյալ նյութերին և պատրաստել իրենց հարցերն ու առաջարկները: Նշվեց նաև, որ կայանքը գտնվելու է մոտակա բնակելի տնից մոտ 530

մետր հեռավորության վրա, իսկ ճանապարհից՝ մոտ 600 մետր հեռավորության վրա, Սևանա լճից հեռավորությունը 2.2 կմ է:
Ներկաները հայտնեցին իրենց դրական վերաբերմունքը նախատեսվող գործունեությանը, նշելով որ այն սոցիալական դրական ազդեցություն կունենա համայնքի վրա:

Այլ հարցեր չհնչեցին և Վարդաձորի համայնքապետարանի ներկայացուցիչ պարոն **Մ. Ավետիսյանը** շնորհակալություն հայտնեց ներկաներին մասնակցության համար և ամփոփելով ավարտեց հանդիպումը:

Քննարկումների պատասխանատուի ներկայացուցիչ և վարող՝
Վարդաձորի համայնքապետարանի ներկայացուցիչ՝ Մ. Ավետիսյան

Քննարկումների արձանագրող՝
«Ի ՍԻ Ի Քառւքազուս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Մ. Բաբայան

Ձեռնարկողի ներկայացուցիչ՝
Ա/Ձ Ս. Հակոբյան՝ Ս. Հակոբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Վարդաձոր համայնքում նախատեսվող բժշկական թափոնների այրման կայանքի նախագծի և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 3-րդ հանրային քննարկումների

2022թ-ի հունիսի 17-ին, ժամը 14:00-ին Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքի Վարդաձորի վարչական ղեկավարի նստավայրում (հասցե՝ գ. Վարդաձոր, փոստային ինդեքս 1417) տեղի ունեցան Վարդաձոր բնակավայրում նախատեսվող բժշկական թափոնների այրման կայանքի նախագծի և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 3-րդ հանրային քննարկումները՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն: Հանրային քննարկումների հայտարարությունը հրապարակված է եղել «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2022 թ-ի հունիսի 04-ի թիվ 103 (7769) համարում:

Հանդիպմանը մասնակցում էին Վարդաձորի համայնքապետարանի, նախատեսվող գործունեության ձեռնարկողի՝ Ա/Ձ Ս. Հակոբյանի, նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի մշակման և հանրային լսումների կազմակերպման պատասխանատու ընկերության («Ի ՍԻ Ի Քաուքազուս» ՍՊԸ) ներկայացուցիչները, ինչպես նաև համայնքի բնակիչները:

Մարտունու համայնքապետարանի ներկայացուցիչ **Մ. Ավետիսյանը** ողջունեց ներկաներին և ներկայացրեց հանդիպման նպատակը: Այնուհետև Մ. Ավետիսյանը խոսքը փոխանցեց «Ի ՍԻ Ի Քաուքազուս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Վ. Թևոսյանին:

Վ. Թևոսյանը ողջունեց մասնակիցներին և հայտնեց, որ մինչ այժմ, նախատեսվող գործունեության վերաբերյալ առաջին 2 լսումների ժամանակ ներկայացվել էին ընդհանուր տեխնոլոգիական տվյալներ, իսկ այս՝ 3-րդ լսումների համար պատրաստվել են ստույգ հաշվարկներ: Վարդաձոր համայնքում նախատեսվում է ստեղծել բժշկական, կլինիկական թափոնների վնասազերծման, այրման կայանք, ուստի կատարվել են հաշվարկներ, թե որոշակի ծավալների դեպքում ինչքան մթնոլորտային արտանետումներ են լինելու, ինչքան ջուր է օգտագործվելու և ինչպիսի թափոններ են առաջանալու:

